

6409

271.15

U-77

43
1 OCT 2009

ՀԱՍՏԱՏՈՒՄ ՎԱՐՔ

ԾԱՌԱՅԻՆ ԱՍՏՈՒԹՈՅ ՄԵԽԹԱՐ ԱԲԲԱՅԻ

271.15

۸۸-۷۷

142

Հ. ՅՈՎՀԱՆ ԱԻԳԵՐԵԱՆ

"Urgenf." 4000. wissenschaftl.
21. Aug. 1925 Es entstammt
Kreuzenbach Amphibolitgestein
Urbach

ՀԱՄԱՐՈՏ ՎԱՐՔ

۲۷

ԾԱՌԱՅԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻՒԼԹԱՐ ԱԲԲԱՅԻ



ՎԵՆԵՏԻԿ

Ա Խ Ե Թ Ա Ը Ն Ե Ա Կ Ա Վ Ս Պ Ա Ը Ն


1913

12.03.2013

6409



3967
47



Միհթար Աբրամյան

ՀԱՄԱՌՈՅՎԱՐՔ

ԾԱՌԱՅԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻՒԹԱՐ ԱԲԲԱՅԻ

Բարեպաշտ և առաքինի ծնողաց
զաւակ, Միհթար Աբբահայր, ծնաւ Ան-
քաստիոյ մէջ 1676 փետրուար 7ին. և
մկրտութեան ժամանակ կոչուեցաւ Ամ-
նուկ:

Այն որ Աստուծոյ ընդդեալն էր և ամ-
բողջ ազգի մը հաւատքի և զիտութեան մէջ
վերածնողը պիտի ըլլար, չունեցաւ փայ-
լուն և նորանշան զարմանալիք իր կե-
նաց մէջ, բայց եթէ վիշտեր ու նեղու-
թիւնք, ինչպէս պիտի տեսնենք. չեղաւ
այն սուրբերէն որոնց վարքը ծննդենէ
մինչև մահերնին հրաշքներու շարք մ'է.
և սակայն պզտիկութենէն ի վեր ամէն
զինքը տեսնողներ զարմացմամբ կը կրկ-
նէին Աւետարանի խօսքը. « Զի՞ն լինիցի
մանուկս այս »: Աստուծոյ շնորհը կա-
նուիսէն սկսաւ փայլիլ իր վրայ. իր գէմ-
քին վրայ, իր շարժմանց մէջ կար հրեշ-



տակային օծութիւն մը որ զամէնքը կը հիացունէր. միանգամայն լուրջ էր և չէր ցուցներ բնաւ տղայական թեթևութիւն մը: Այնքան շնորհալի էր և այնքան ուշիմ:

Դեռ հազիւ հինգ տարեկան էր Միթթար, երբ իւր բարեպաշտ ծնողը, տեսնելով իրենց զաւակին վրայ Աստուծոյ շնորհաց այնքան յայտնի նշաններ, առաքինի քահանայի մը յանձնեցին անորդաստիարակութիւնը, որպէս զի առաջնորդէ իրեն աստուածսիրութեան և ուսմանց մէջ, որոնց մէջ քիչ ժամանակէն այնչափ զարգացաւ Միթթար որ նոյն իսկ իր դաստիարակ քահանայն զարմացուց իր եռանդուն հոգովը և հասուն ու արթուն խելքովը. Քիչ ատենուան մէջ սորվեցաւ զրկեթէ բոլոր աղօթքները և ժամերգութեան երգերն ու սաղմուները. սորվեցաւ կարգալ ու զրել և այնչափ էր իր ուսումնասիրութիւնը որ երբ մելան չզբաներ, այլ և այլ նիւթերով սև ներկ մը կը ձեւացնէր զրելու համար: Բարեպաշտ ծնողն ալ կ'օգնէին իրեն յառաջաղիւմութեան ուսմանց և հոգեսիրութեան մէջ. միշտ կը տանէին զինքը մօտի եկեղեցին ժամերգութեանց և ուրիշ հանդէսներու համար, և այնքան կ'ախորժէր նա հոն կենալ որ դժուարաւ կընային զինքը ան-

կէ հեռացնել. հոն լսելով միայն բերնուց սորվեցաւ շատ շարականներու և տաղերու եղանակները և տուն զառնալով յաճախ կը կրկնէր և կ'երգէր զանոնք իր անոյշ ձայնովը:

Աստուած ալ որ մեծ դիտումներ ունէր անոր վրայ, այդ մանկական թարմ տարիքէն վառեց անոր սրտին մէջ մեծ փափաք մը հոգեորական կենաց, այնպէս որ կ'ըսէր յաճախ իր ծնողաց և ազգականաց թէ, երբ ես մեծնամ, կրօնաւոր պիտի ըլլամ և ոչ աշխարհական: Իսկ եթէ իր ծնողը կամ ուրիշ մը կատակով գէմ կենար և դժուարութիւններ դնէր առջեր, կը տիրէր իսկոյն և կը վշտանար: Անգամ մը լսելով Յովհաննէս Մկրտչի և ուրիշ ճգնաւորներու վարքերը, որոնք իրենց տունը թողած բաշուած են անապատներու մէջ և հոն աղօթքի միջոց հրեշտակներ եկած են իրենց քով, այնչափ վառեցաւ սիրտն անոնց նմանելու փափաքով, որ ուրիշ հասակակից տղու մը հետ խօսքը մէկ ընելով, յանկարծ ծածուկ փախան տունէն: Քաղըին մօտ բարայրի մը մէջ ապահնեցան և սկսան ծնրադիր աղօթք ընել, յուսալով որ հրեշտակ մը երկնքէն իրենց կերակուր բերէ: Բայց երբ երեկոյ եղաւ և

մութը պատեց և գեռ հրեշտակը չէր
տեսնուեր, սկսան լալ բարձրածայն, մինչ
և որ զիրենք փնտոելու համար զրկուած
մարդիկ հոն հասան և տուներնին դար-
ձուցին:

Կրնայ զիւրաւ գուշակուիլ թէ ինչպի-
սի եռանդն աստուածսիրութեան կը վա-
ռուէր այդ մատաղ հոգւոյն մէջ, մանկա-
կան այս փորձը նայելով: Պայծառ ար-
շալոյս մ'էր որ ամենազեղեցիկ օր կը
գուշակէր: Մխիթար օրէ օր կը յառա-
ջադիմէր, տասը տարեկան հասակին՝ ար-
դէն սորված էր ամբողջ ինչ որ իրեն
դաստիարակ քահանայն կարող էր սոր-
վեցնել. ուսմանց մէջ յառաջադիմելու
համար ուրիշ միջոց չկար իրեն բայց ե-
թէ զիրքեր գտնալ ու կարդալ:


Այս ժամանակները Սերաստիոյ մէջ
կային երկու բոյրեր սրբակաց կուսանք,
Մանասէ և Մարիամ անոնով, որոնց
սրբութեան և առաջինութեան համբաւը
տարածուած էր բոլոր քաղքին մէջ և ժո-
ղովուրզը կը կոչէր զանոնք հոգետես կու-
սանք, ինչպէս որ գեռ մինչև այսօր ալ
այդ անունով իրենց համբաւը կը տեէ:
Մխիթարայ ծնողքը այս սուրբ կուսա-
նաց քով զիրին զինքը որպէս զի իր ան-
մեղ և եռանդուն հոգին սրբութեան ճամ-

բուն մէջ աւելի ևս զարգանայ: Հոն տես-
նուեցաւ Մխիթարայ հոգւոյն բովանդակ
զեղեցկութիւնը. առաւօտուղնէ մինչև ե-
րեկոյ բարձրածայն կը կարդար հոգեսր
զիրքեր և աստուածաշունչը, յստակ և
անոյշ ձայնով, և կոյսերը մտիկ կ'ընէին:
Այս ոճով, և միանգամայն լսելով ան-
դադար անոնց խօսած հոգելից խրատնե-
րը և մասնակցելով անոնց եռանդնավառ
աղօթքներուն, Մխիթար ա՛լ աւելի իմա-
ցաւ աշխարհիս ունայնութիւնը և Աստու-
ծոյ սիրոյն համար արհամարհեց ամէն
մարմնական հանգիստ և զիւրութիւն: Այն
մատաղ հասակին մէջ սկսաւ իր զաստիա-
րակ կուսանաց նման ճգնութիւններ ընել
ու խարազն հագուիլ փափուկ մարմնոյն
վրայէն. հրաժարեցաւ բոլորովին միս ու-
տելէ և զինի խմելէ և եօթը տեսակ պը-
տուղներէ, ինչպէս խաղող, տանձ, խրն-
ձոր և այլն, մահացուցման համար: Եա-
բաթապահոց միջոց ալ երկու երեք օր
առանց բան մ'ուտելու կ'անցունէր. ան-
գամ մ'ալ ամբողջ մեծ պահոց ժամանակ
ամեններին ջուր չխմեց: Այս արտաքին
մահացուցմանց վրայ աւելցուցած էր նաև
ներքին մեռուցումներ հրաժարելով իր ա-
մէն փափաքներէն և ջանալով միշտ իր
կամքը թողուլ և այլոց ուզածը կատա-

բել. Երբ ազատ ժամանակ գտնէր, իսկոյն
ամփութելով կամ աղօթք մը կ'ընէր
կամ մանաւանդ հոգեոր բան մը կը մը-
տածէր :

Այսպիսի չքնաղ առաքինութիւն տես-
նելով, այդ սրբաւէր կուսանք կը գուր-
գուրային իրեն վրայ, կը մեղմէին անոր
ըրած մեռուցումները որպէս զի առողջու-
թիւնը չփասովի, և փառք կու տային
Աստուծոյ: Աստուած ալ երկնաւոր տե-
սիւրներով ցուցուց անոնց թէ ինչ բանի
կը պատրաստէր զՄխիթար:

Գիշեր մը երբ երկու քոյր կուսանք
առանձին առանձին կ'աղօթէին, երկու-
քին վրան ալ թմրութիւն մ'եկաւ և յան-
կարծ տեսան իրենց զիմաց բարձրացէն
փառաւոր պալատ մը, բայց հոն երթալն
անկարելի էր, որովհետեւ բարձր ժայռի
վրայ էր և ճամբան սառով ու ձիւնով
ծածկուած. պղտիկ տղայ մը մուրճով
սառերը կը կոտրէր և թիով մ'ալ ձիւ-
ները մէկդի կը նետէր: Մինչդեռ կու-
սանք հիացած էին այս տեսլեան վրայ,
Աստուած իրենց յայտնեց որ այդ շէնքը
արբայութեան դուռն էր և թէ այդ տղան
հոն երթալու ճամբան կը բանար: Եւ երբ
ուզելով տեսնել թէ ով է այն մանուկը՝
մօտեցան, տեսան որ Մխիթարն էր. հար-



Մխիթար աղօթող:

ցուցին իրեն թէ ինչ կ'ընես հոս. « Սա-
որ և ծիւնը մէկդի կ'առնում, ըստւ, որ-
պէս զի ճամբան բացուի և մարդիկ կա-
րենան համարձակ հոն երթալ ». և իս-
կոյն տեսիլքն աներեռութացաւ: Առաւօտը
հազիւ թէ մեծ բոյըն ուրախութեամբ կ'ու-
զէր տեսածը պատմել պգտիկ քըոջ, սա-
խկոյն աճապարեց հարցնելով թէ մէթէ
մեր Միսիթարայ համար էր տեսիլքը. և
իրարու պատմելով իմացան որ ըստ ա-
մենայնի նոյնն էր տեսածնին:

Ուրիշ անգամ մ'ալ դարձեալ տեսան
զՄիսիթար որ մեծ ու շքեղ ապարանքի
մ'առջե կեցած էր լուսաւոր մարդկանց
մէջ, և անոնք իրեն տեսակ տեսակ ա-
նոյշ իւղեր կու տային: Եւ դարձեալ աս-
տուածային ազդեցութեամբ իմացան որ
այդ տեսիլքը կը նշանակէր Միսիթարայ
ունենալիք ապագայ իմաստութիւնն ու
քաղցը վարդապետութիւնը՝ զոր Սուրբ
Հայրերու գործերուն ընթերցմամբ և զը-
րեթէ հեղական շնորհքով պիտի ստանար:

Այսպիսի տեսիլքներով միսիթարուած
սուրբ կուսանք կ'օրհնէին զԱստուած և
կը սպասէին իր յայտնածներուն կատար-
ման: Ավայն Միսիթարայ բնաւ բան մը
չյայտնեցին, միայն ըսին որ քահանայ
պիտի ըլլար. բայց իրենց հաւատարիմ և

բարեպաշտ բարեկամներուն պատմեցին
ամէն բան:

Աստուած կրօնաւորական կատարելու-
թեան կոչեր էր զինքը, և միսիթար՝ ուն-
կընդիր և հլու այդ ձայնին, չէր կրնար
մնալ աշխարհի մէջ. հասած էր այլ ևս
ժամանակն, որ նոյեան ամրիծ աղաւնոյ-
նման, աշխարհիս ազմուկներու մէջ չը-
զըստնելով իր սուրբ հոգւոյն դադար մը,
դառնար քաշուէր վանքի մը միայնարանը.
ի զուր էր այլ ևս ծնողաց ընդդիմանա-
լը, ըսելով թէ գեռ պգտիկ է և չկրնար
տանիլ կրօնաւորական կենաց ծանրու-
թեան. լրացած էր իրենց սահմանած
փորձի տարին և Աստուած որ այդ մար-
գարինը կ'ուզէր անարատ պահել, կար-
ծես ինքն ամէն ինչ զիւրացուցած էր:
Հայրը գործերու պատճառաւ Սերաս-
տիայն հեռացած էր, և բարեպաշտ մայ-
րը չէր կրնար ընդդիմանալ իր որդւոյն
առաքինասէր թախանձանաց, խիզճ կ'ը-
նէր որ չըլլայ թէ Աստուծոյ կամքին
հակառակած ըլլայ եթէ թող չտայ.
ուստի երկու կուսանաց խորհրդով տա-
րաւ յանձնեց զինքը Սերաստիոյ քով
Ս. Նշան վանքի Անանիա եպիսկոպոսին,
որ արդէն ճանչցեր էր Միսիթարայ սըր-
բութիւնն ու առաքինութիւնը և եկնդե-


ցական փոքր աստիճաններն ալ տուեր էր իրեն պզտիկոց:

Ոնանիս մեծ ուրախութեամբ ընդունեցաւ զՄիթար և իսկոյն հազցուց անոր կրօնաւորութեան սքեմը. յաջորդ կիրակի օրն ալ ուրիշներու հետ զինքն ալ սարկաւագ ձեռնաղեց որ այլ ևս կրօնաւորական վիճակէն չկարենան հանել զինքը:

Միթար դեռ տասնուշինգ տարեկան էր երբ վանք մտաւ, սակայն թէ առարինութեամբ և թէ ուսմամբ այնքան յառաջադէմ էր արդէն, որ վանքին մէջ չգտնուեցաւ մէկ մը որ կարենար իրեն առաջնորդել: Իսկ ինքը Միթար որ շատ լաւ ըմբռնած էր թէ ինչ բարձր վիճակ է քահանայութիւնը և թէ ինչ սըրբութիւն ու զիտութիւն կը պահանջուի անոր համար, դեռ շատ պակասաւոր կը գտնէր ինքզինքը: Առանց ժամանակը փուճ բաներով անցնելու, անդադար Ա. Գիրը կը կարդար՝ տուն առ տուն խորհրդածելով, և այսպէս շատ բան բերնուց կը սորվէր. կը կարդար նոյնպէս ուրիշ ինչ օգտակար զիրը որ ձեռքն անցնէր և անոնց մէջէն հարկաւոր և օգտակար բաները կը քաղէր առանձին տետրակներու մէջ. շատ անզամ ալ երբ

կարդալու զիրը մը չգտնէր ինքն իր կողմանէ հոգեոր երգեր ու տաղեր կը գրէր, և երեմն իր սենելին մէջ առանձնանաւով, վարժութեան համար հոգեոր խրատներ ու քարոզներ կը խօսէր, և վանականներէն շատերը առանց իր զիտնալուն դրան ետևէն մտիկ ընելով կը սքանչանային անոր զիտութեան վրայ որովհետև այնպէս զեղեցիկ խրատներ ու քարոզներ դեռ լսած չէին բնաւ: Այլ այս բաւական չէր իր զիտած կատարելութեան համար. ուստի կրկնապատկելով իր սովորական ջերմեռանդութիւնըն ու ճշգնութիւնները, արտասուագին կը պալդատէր Աստուծոյ որ իրեն լոյս մը ցուցնէ և լաւ առաջնորդ մը տայ. սակայն Աստուծուած որ արդէն իսկ իր սուրբ շնորհքով լեցուցած էր անոր սիրտն ու հոգին և պարզեած էր արթում ու սուրբ միաբ մը, հարկ չէր տեսներ որ մարդիկ առաջնորդեն իրեն, այլ ամէն բան կ'ուզէր ինքն իրը հեղական շնորհքով սորվեցնել անոր. և այս յետոյ աւելի ևս պայծառ կերպով տեսնուեցաւ՝ երբ Միթար այլ և այլ վարդապետներու աշակերտելով ամենաին օգուտ մը չտեսսաւ անոնցմէ:

Այսպիսի վարդապետներու մէջ զիմանըն էր Ա. Կ. Արքայի արքեպիսկոպոսը, որ



իւր գիտութեան և ճգնողական խիստ վարուց համբաւով շատ անուանի էր. սա դիպուածով մը Ա. Նշանու վանքը գալով և լսելով Միսիթար պատանոյ համբաւը, իմանալով ալ որ շատ կը փափաքի իրեն աշակերտիլ, ի սկզբան մեծ սիրով և հայրաբար ընդունեցաւ զինքը և ուզեց իրեն հետ Էջմիածին տանիլ, լսելով թէ հոն ամէն բան կը սորվեցնեմ քեզի և վարդապետ կը ձեռնադրեմ զքեզ: Բայց հազիւ թէ մէկ երկու օրուան ճամբայ հեռացան Սեբաստիայէն, վարդապետին առաջին քաղցրութիւնն ու սէրը յանկարծ բոլորովին դառն խստութեան փոխուեցան:

Դեկտեմբեր ամիսն էր և եղանակը սաստիկ ցուրո՞ երբ ճամբայ ելան, և կարաւանը շատ անզամ զիշերները քացօթեայ կ'անցնէր, չկարենալով հանգորուաններ հասնիլ: Միսիթար՝ որ ուրիշ պատսպարութիւն մը չունէր ամեննեին բաց ի մէկ վերարկուէն, ստիպուած անոր կէսը կը փոէր սառած ձեան վրայ և միւս կէսը վրան առած այնպէս դողդըղալով կ'անցնէր բոլոր զիշերը. իսկ վարդապետը՝ որ կը տեսնէր, բուրձի կտոր մ'ալ չէր տար իրեն. մանաւանդ թէ ցորեկներն ալ կը թողուր որ կարաւանին ետեէն հասնելու համար շարունակ վազէ

հեալով, այն աստիճան որ անզամ մը այլ ևս ոգեսպառ, շունչը հատած, լնկաւ մնաց ճամբուն վրայ և կարաւանը հեռացաւ: Սակայն Աստուած կը հսկէր իր հաւատարիմ ծառային վրայ և կը պահպանէր զինքը: Այլազգի ջորեալան մը, որ գործի մը պատճառաւ կարաւանէն ետ մնացեր էր, անցած միջոց՝ տեսնելով խեղճ պատանին այնպէս անխնամ թողուած, Սամարացւոյն պէս զիժացաւ անոր վրայ, բռնեց նստեցուց իր ծիռոն վրայ և բերաւ հասցուց կարաւանին: Միսիթար չնորհակալ եղաւ Աստուծոյ և այդ բարի այլազգւոյն, բայց իր վարդապետին ամեննեին բան մը ըլսաւ, պզորիկ զանզատ մ'անզամ չելաւ բերնէն, այլ միշտ առաջուան պէս սիրով և հլութեամբ կը ծառայէր անոր՝ Աստուծոյ սիրոյն համար: Երբ կարին հասան, եկեղեցւոյ զրան առջև ծախուած զիրքերու մէջ խոկումն քրիստոնէական անունով հոգեսոր զիրք մը գտաւ Միսիթար և զնեց ու սկսաւ կարդալ. բայց հազիւ թէ վարդապետը զայն իր ձեռքը տեսաւ, բարկանալով առաւ ձեռքէն և ըսաւ թէ այդպիսի զիրքեր վարդապետներու համար են և ոչ թէ քեզի: Վասն զի կը վախէր որ ըըլայ թէ Միսիթար զիրքեր կարդալով իրմէ աւելի

գիտուն ըլլայ. և յայտնապէս ալ կ'ըսէր իրեն, որ՝ եթէ նախ տասուերկու տարի ծառայես ինձի, անկէ վերջ կը սորվիցը-նեմ քեզի պէտք եղածը և վարդապետ ը-նելով կ'արձակեմ: Սակայն Միսիթար բու-լուրովին ինքինքը Նախախնամութեան յանձնած՝ ամենելին ձայն չէր հանէր և Աստուծմէ կը սպասէր իրեն օգնութիմ:

Երբ Էջմիածին հասան՝ ալ աւելի ծան-րացաւ Միսիթարայ վիճակը: Գէթ Ա. Նշանու մէջ ազատ կրնար կարդալ ու գրել, հոս այդ ալ արզիլուած էր խստիւ և միայն ծառայութեան պիտի զբաղէր վարձուած սպասաւորի մը պէս: Հոս սո-վորութիւն կար որ միաբանները ամէնքը կէս զիշերին կ'ելլէին ժամերգութեան հա-մար. և որովհետև Միքայէլ արքեպիսկո-պոսը ուշ կը պառկէր, Միսիթար ստի-պուած էր անոր քով սպասել երկար ժա-մանակ մինչև որ քնանայ. յետոյ ինքն ալ կ'երթար պառկելու. բայց հազիւ թէ աչքերը զոցած պիտի քնանար, զանգակը կը զարնէր և հարկ էր որ ինքն ալ ել-լար ուրիշներուն հետ ժամերգութեան եր-թար. և թէպէտ ուրիշները կրնային վեր-ջը նորէն քնանալ, սակայն ինքն իրեն սպասաւոր ըլլալով, պէտք էր միշտ ար-թուն կենար վարդապետին ամէն հրա-

մաները կատարելու համար: Այսպէս երկար ժամանակ անցրուն մնալով, աչքի-րուն մէջ արիւն լիցուեցաւ և սաստիկ աչքի ցաւ մ'ունեցաւ:

Այս ամէնը զիտէր և կը տեսնէր իւր վարդապետը, սակայն ոչ թէ միայն դար-ման մը չէր ըներ, այլ նոյն իսկ թոյլ կու տար որ ուրիշներ ալ զինքը տանին այգին ու գործաւորի պէս աշխատցնեն արևու գիմաց. որով նոյն իսկ վտանգ կար բոլորովին կուրինալու: Գէթ այսչափ նեղութեանց փոխարէն՝ հոգեոր բաջալե-րութիւն մը լսէր, կամ բան մը սորվէր. զուրկ էր բոլորովին երկուքէն ալ, և միայն վարդապետին դառն յանդիմանու-թիւնքը կը լսէր շարունակ առանց պլըզ-տիկ յանցանք մ'ունենալու: Սակայն Աս-տուած թոյլ տալով այս ամէնը, կ'ուզէր սորվեցնել իրեն թէ ինչպէս ապագային հայրաբար քաղցրութեամբ պէտք է ինա-մէ իրեն աշակերտները: - Միսիթար թէ-պէտ ամենայն խոնարհութեամբ՝ անձայն և առանց տրանջալու կը համբերէր, բայց տեսնելով որ իր հոգեոր յառաջադիմու-թեան մեծ վնաս պիտի պատճառէ դեռ աւելի հոն ուշանալը, լսելով միանգա-մայն Աւանայ վանքին խստակրօնութեան համբաւը, ուզեց հոն երթալ. թէպէտ զի-

տէր որ հոն պիտի չգտնէ ուսումն, այլ զողին բան զամէն ինչ վեր կը դասէր ինքը։ Բարեբաղդաբար իր ծանօթներէն մին՝ Ստեփանոս անունով, Լջմիածին ուխտի եկած ըլլալով, կ'ուզէր նաև Սեւան երթալ։ Թէոդորոս եպիսկոպոսի օգնութեամբ, որ բարի մարդ մ'էր և կը զթար Միփիթարայ բաշածներուն վրայ, կէս զիշերին եւաւ և ծածուկ փախչելով իր դաժան վարդապետէն, զնաց ընկերացւ Ստեփանոսի, որ ճամբուն վրայ ժամադրուած տեղը կը սպասէր իրեն, և մեկնեցան դէպ ի Սեան։ Երբ առաւոտ եւ զաւ Միքայէլ արքեպիսկոպոս տեսնելով որ Միփիթար չկայ և իմանալով անոր փախչիլը, իսկոյն մարդիկ ճամբեց ամէն կողմ որ զինքը բռնեն և ետ դարձնեն. բայց Աստուծոյ արամազրութեամբ, ոչ ոք իրենց բռնած ճամբուն հիտեեցաւ, և մինչ երեկոյ ի զուր փնտուելէ վերջ ամէնն ալ ետ դարձան։

Բայց Սեանայ մէջ ալ մեծ յուսախարութիւն մը կը սպասէր Միփիթարայ. հոն ալ չգտաւ իր այնքան եռանդեամբ փափաքած հոգեսիրութիւնը։ Այն ատեն ճարահատած զիշեր ու ցորեկ արտասուալից Աստուծոյ դիմաց ինկած կը պաղատէր. Ով տէր իմ, կ'ըսէր, ինչ պիտի ըլլայ

ինձ, կամ ես ինչ ընեմ որ հոս ալ չըշգտայ իմ սրտիս փափաքը. որո՞ւ դիմեմ, Տէր իմ բարերար, բաց ի քեզմէ որ լոյս ես խաւարելոց և առաջնորդ կենաց։ Եւ մինչդեռ օր մը եկեղեցւոյ մէջ Ա. Աստուածածնայ պատկերի մը դիմաց ծնրազիր կ'աղօթէր այսպէս ու կը հեծէր, և արցունքն աղբիւրի պէս կը հոսէր աշքերէն, յանկարծ երկցաւ իրեն Ա. Աստուածածին, ծաղկէնկար պատմուճան մը հազած, բոված ալ երկու կուսանք, որոնք իրեն ըսին թէ ինքն է Աստուածամայր ամենասուրբ Տիրուհին։ Միփիթար խոնարհութեամբ իր անձին ոչնչութեան մէջ ընկղմած՝ անպատմելի ուրախութեամբ լեցուեցաւ տեսնելով Ա. Կոյսը, որ մայրական գութով մօտեցաւ իրեն և միսիթարելով ու բաջալերելով զինքը, խնդրէ, բսաւ, ինչ որ կ'ուզես և պիտի կատարեմ։ Այն ատեն աստուածային լոյս մը ծագեց սրտին մէջ, բացաւ ամբիծ շըրթունքն ու թոթովեց. Մայր իմ, չեմ զիւտեր թէ ինչ կարեոր է ինձ և օգտակար՝ որպէս զի ինպէնմ. այն կ'ուզեմ ինչ որ Դու կ'ուզես, և այն կը խնդրեմ ինչ որ Դու զիտես թէ ինձ պիտոյ է և կ'ուզես տալ։ — Բարի է, պիտի կատարեմ այդ խնդրուածք, պատասխանեց զթած Տի-

ըուհին և վերացաւ: - Այն վայրկեանէն լեցուեցաւ Միսիթարայ սիրտն անպատմելի ուրախութեամբ և արիութեամբ. և այդ տեսիլքն անջնջելի դրոշմուեցաւ իւր մտաց առջև, և ապագային՝ ամէն վշտաց ու նեղութեանց մէջ այնու կը միսիթարուէր ու կը զօրանար:

Վատահացած Ա. Աստուածածնայ մայրագութ պաշտպանութեան վրայ, այլ ևս հոն մնալն ալ աւելորդ տեսնելով որոշեց դառնալ ի Սեբաստիա: Երբ հասաւ Բասմենոյ վանքը, որ կարինէն մէկ օր հեռուէ, տեղոյն Մելքիսեթ եպիսկոպոսը, Միսիթարայ շնորհալի կերպէն ու խօսուածքէն ճանչնալով անոր հոգույն վեհութիւնը, սիրոը կապուեցաւ անոր հետ և անոյշ խօսքերով հայրաբար յորդորեց զինքը որ հոն մնայ և վանքին տղայոց դաստիարակ ըլլայ: Միսիթար յանձն առաւ անոր խնդիրը, մանաւանդ այն պատճառաւ՝ որ հոն եկեղեցոյն մէջ Ա. Աստուածածնայ պատկեր մը կար ճիշտ նման, ինչպէս որ երկցած էր իրեն Աւանայ մէջ: Հոս առաջին անգամ սկսաւ Միսիթարայ առաքելութեան հոգին փայլիլ. ամենայն եռանդեամբ կ'աշխատէր որ այդ տղոց սրտերուն մէջ առաքինութեան և ուսմանց սէրը տոգորէ. աւելցած ժամանակն ալ

աղօթքով կամ մտածականով և օգտակար ընթերցումով կ'անցնէր: Եպիսկոպոսն ալ երբ իր թեմերուն հոգեոր այցելութեան կ'ելէր, միշտ հետը կ'առնուր նաև ըզ-Միսիթար, որ այն միջոց գեռ տասնուեօթ տարեկան էր, և ժողովրդեան զիմաց անոր քարոզել կու տար. որովհետեւ ինքը Տովբիթայ պատմութենէն զատ ուրիշ բան չէր զիտեր և ամէն տեղ զայն կը պատմէր: Ժողովուրդն զմայլած Միսիթարայ հոգեշահ խրատներէն, յայտնապէս կ'ըսէին որ զինքն իրենց եպիսկոպոս պիտի ընեն, երբ տարիքը համնի: Ասկայն որչափ տարբեր կը մտածէին իրենք և Մըսիթար, որուն սրտին մէջ այնքան արմատացած էր խոնարհութիւնը՝ որ մըտքէն իսկ չէր կրնար անցնել թէ ինքը հոգուց առաջնորդ ըլլալու սահմանուած էր. նա խոնարհ հնազանդութեան մէջ զիտէր իր հոգույն յառաջադիմութիւնը, և ամէն փառք ու պատիւ, առաքինութեան դէմ լարուած որոգայթ կը ճանչնար:

Մէկուկէս տարի եղած էր արդէն իր Բասմեն գալը երբ յանկարծ լուր մ'եկաւ Անդրաստիայէն որ իր դաստիարակ կուսանաց կրտսերը վախճաներ է և գերեզմանին վրայ լոյս կը ծագի: Այլ ևս չէր կրնար

դիմանալ. ի զուր Մելքիսեթ հպիսկոպոսն լալով կը թախանձէր որ հոն մնայ. Մը-իմիթար պէտք էր փութով Սեբաստիա դառնալ և գէթ միւս քրոջ յետին օրհնութին առնուլ և անոր հոգեխօս բերնէն գէթ վերջին անգամ մ'ալ լսել սրտին անդորրացուցիչ խրատներ: Շատ նեղութիւններ քաշած էր մինչև այն ատեն և սրտին մէջ ունէր վիշտեր որոնց փոխարէն սփոփիչ խօսքի մը պէտք ունէր և Աստուած կատարեց իր սիրելի ծառային այս ջերմեռանդն փափաքը. և Սեբաստիա գալով իսկոյն միսիթարուեցաւ իր սրտին բովանդակ վիշտերը բանալով այդ օրհնեալ կոյսին որ զինքը քաջալերեց և փառատեց իր տարակոյնները: Սակայն Սեբաստիոյ մէջ ալ Աստուած զեռ ուրիշ ծանրագոյն փորձ մ'ալ պահած էր իրեն համար: Միմիթար գեղեցիկ աղամանդ մ'էր որ վշտաց շփուելով աւելի շքեղ պիտի փայլէր:

Լշմիածնայ մէջ առած աչքի ցաւը թէպէտ կամաց կամաց նուազած էր բայց բոլորովին չէր առողջացած և երբեմն երբեմն դարձեալ կը ծանրանար, ինչպէս եղած էր Բասեն կեցած վերջին ժամանակները և Սեբաստիոյ մէջ ալ աւելի շքեղ ծանրացաւ: Որովհետև անդինիա առա-

ւոտէն մինչև ճաշու ժամը լլ. Գիրք և լլ. Հարց գրածները կը կարդար և կ'օրինակէր, կամ իր կողմանէ բաներ կը գրէր, ճաշէն վերջն ալ իսկոյն նորէն կը նստէր նոյնուկս աշխատելու մինչև երեկոյ, զարձիալ աչքերը լցուեցան արիւնով և հետրզէտէ գէշնալով բոլորովին խաւարեցան և ստիպուեցաւ լլ. Նշանու վանքը թողուլ և գառնալ իր ծնողաց քով՝ որպէս զի խնամուի: Դիւրին է գուշակելլթէ որբան սրտի ցաւ ու կսկիծ կ'ունենային ծնողը և ինչ դառն արտասուր կը թափէին, երբ իրենց սիրելի որդուոյն աչքերը, հակառակ ամէն սիրալիր մարդկային խնամքներու, բոլորովին այսպէս խաւարեցան, և ինքը կ'ըսէր թէ բնաւ լոյս չեմ տեսներ: Իսկ ինքը Միմիթար միշտ անխոռվ ու հանդարտ, Աստուծոյ ձեռքէն կ'ընդունէր ամէն բան և արիական համբերութեամբ ու համակամութեամբ տանելով ամէն ցաւոց՝ ինքոյնքը զոհ կը նուիրէր Աստուծոյ սուրբ կամաց, և կը յորդորէր նաև զամէնքը որ իրեն հետ փառք տան Աստուծոյ և օրհնեն իւր սուրբ կամքը: Բնաւ իր հոգեորական և կրօնաւորական պարտքերէն մէկը զանց չէր ըներ, այլ առանձնացած տանը մէկ անկիմը, երկար ժամեր անդադար աղօթ-

քի և սուրբ մտածութեանց կը պարապէր: Եթէ յանկարծ կարդալ զիտցող մը գար իրենց տունը, անոր կարդալ կու տար Ա. Գրոց և Ա. Հարց այլ և այլ մասեր և զանոնք բերնուց կը սորվէր շուտով. այսպէս սորվեցաւ գրեթէ ամբողջ Յիսուս Որդի գիրքը: Երրեմն ալ ինքն իր կողմանէ հոգեոր տաղեր և ուտանաւորներ կը շինէր և անոր զրել կու տար, այս ժամանակ շինեց նաև Ա. Աստուածածնայ այն գեղեցիկ այրութենական ոտանաւոր տաղը, որուն առաջին մասին երկրորդ տողերը կը կազմեն մինչ կոյրեն իի ուխուցի, զի ի կուսկի րյս տացցի: Այսպէս Աստուածոյ կամքը մագնէս մ'էր որ առ ինքն կը ձգէր անոր ամէն իղձերն ու մտածութիւնքը. այսքան զառն վիճակի մէջ երբէք պատիկ անհամբերութիւն մ'իսկ չցուցուց, այլ ամէն բան Աստուածոյ ձգած՝ կը խնդրէր միշտ որ իւր սուրբ կամքը կատարուի իրեն վրայ. այնչափ միայն կը խնդրէր լոյս տեսնալ որ առանց ուրիշներու նեղութիւն պատճառելու կարենայ մինչև եկեղեցի երթալ, սակայն այս ալ եթէ իւր սուրբ կամքն է: Բայց Աստուած որ միշտ բարեգութ հայր մ'է կրնա՞ր միթէ զիմանալ տեսնելով իր սիրելի ծառային քաշած նեղութիւնքը:

Հասած էր ժամանակն որ իւր համբերութիւնը վարձատրուի. մի քանի ամիս այսպէս կուրցածի պէս մնալէ վերջ յանկարծ կամաց կամաց սկսաւ դարձեալ լոյս տեսնալ, և Քիչ ատենէն ալ բոլորովին աղեկնալով նորէն առանձնացաւ Ա. Նշանի վանքը:

Հազիւ քանի մ' ամիս անցած էր, երբ հոն հասաւ նաև Յովեան անունով երիտասարդ և առաքինի վարդապետ մը, որ կ'ուզէր Երուսաղէմ երթալ ուսմանց համար. սա Միսիթարայ հետ այն աստիճան սիրով կապուցցաւ որ չուզելով իրմէ բաժնութիւ շատ աղաչեց որ իրեն հետ միասին երթայ: Միսիթար թէպէտ միտք չունէր Երուսաղէմ երթալու, որովհետեւ այլ ևս յուսահատած էր ազգային վանքերու մէջ իւր հոգույն ու մտաց ճարակը գտնելու, այնու հանդերձ զիջաւ իր բարեկամին աղաչանացը և յանձն առաւ հետը երթալ: Կը յուսար որ կէս ճամբան անոր միտքը փոխել կու տայ և միասին՝ Երուսաղեմի տեղ Հռովմ կ'երթան, ուր որ պղտիկուց ի վեր փափաք մ'ունէր երթալու, և այս փափաքը սաստիկ աւելի վառուած էր վերջերս՝ տեսնելով մէկ քանի Յիսուսեան քահանաներ և անոնցմէ լսելով այնտեղի դպրոցներու

մէջ աւանդուած բարձրագոյն ուսումներն և եկեղեցական արարողութեանց պայծառութիւնը: Ուստի կարեոր պատրաստութիւնը տեսնելով՝ ճամբայ ելան միասին և քիչ ատենէն Յովիսան վարդապետ ալ համոզուեցաւ Մխիթարայ խորհուրդին, բայց բոլորովին տարբեր էր Աստուծոյ խորհուրդը. աներևոյթ հայրական ձեռք մը կ'առաջնորդէր միշտ Մխիթարայ և կը պահպանէր զինքը, որովհետև սահմանուած էր մեծ օժանդակ մ'ըլլալու իր ազգին վերանորոգութեան և լուսաւորութեան. և հիմայ Հոռվմ երթալը, փոխանակ օգտակար ըլլալու կրնար զինքը բուլորովին իւր ազգին անջատել: Այս բանս յայտնի կերպով ալ Աստուծուած իրեն յայտնեց քիչ ատեն վերջ Յիսուսեան բահանայի մը ձեռքով, որովհետև երր սա իւմացաւ որ կը փափարի Հոռվմ երթալ և քննելով տեսաւ անոր եռանդուն աստուածամիրութիւնը և հոգւոց փրկութեան համար ունեցած անձնանութիրութիւնը, տեսաւ նաև իւր ուղղափառ հաւատոց մէջ ունեցած պայծառ գիտութիւնն, յորդորեց և համոզեց զինքը որ առ այժմ մէկդիթողու այդ գաղափարը և անսալով Աստուծոյ իրեն տուած ներշնչանը, ջանայ իր ազգին մէջէն իրեն նման հոգելից քա-

բոզիչներ պատրաստելու: Այս եղաւ այն բարի սերմը որ Մխիթարայ սրտին մէջ բողըոջեցաւ և պտղաբերեց շուտով իր կազմած միարանութիւնը:

Մխիթար այն միջոց պարզ սարկաւագ մ'էր, բայց հոգետես անձինք արդէն իսկ իր մէջ կը տեսնէին ապագայ կատարեալ առաջեալը:

Բայց առ այժմ դառնանք մեր պատմութեան, որովհետև այս ճամբորդութիւնը առիթ մ'եղաւ յորում զանազան կերպերով Մխիթարայ հոգին փայլեցաւ և զգմայլեցուց իր առաջինութեանց բուրմամբ: Եղբայրսիրութիւն, խոնարհութիւն, համբերութիւն, արիութիւն՝ այնքան կատարեալ կերպով փայլեցան իր վրայ որ դեռ տասնութը տարեկան պատանի մ'էր, որքան հազիւ կը տեսնուի մեծ սուրբերու վարուց մէջ: Մալաթիա չհասած սրբնթաց գետ մը կար որ զարնանային եղանակն ըլլալով սաստիկ յորդացած էր. Մխիթար տեսնելով որ Յովնան Վ.ի ձին շատ տկար է, խկոյն իր գօրաւոր ձին անոր տուաւ իսկ ինքը անոր տկար ձիուն վրայ նստած սկսաւ գետէն անցնիլ: Բայց քիչ մնաց որ այս եղբայրասէր անձնանութիրութիւնը իրեն մահուան պատճառ ըլլար. հազիւ գետին կէսը հա-

սած էր, բուն յորձանուտ հոսանքին առջև, ձին տապալեցաւ և ինքը խղզուելու վտանգաւ հազիւ կրցաւ լողալով ինքզիւրը դարձեալ ցամաք ձգել. բայց բոլոր Եր գրուածները յորձանքը տարաւ, և ինքը թրջած ողողուած ստիպուեցաւ մինչև Մալաթիա երեք ժամուան ճամբայ կրարել թաց զգեստներով:

Բերիա հասնելով ստիպուեցան երեք ամիս հոն մնալ մինչև որ պատրաստ նաւ մը գտնեն: Միիթար հոս ալ ձեռքէ չըթողուց իր սովորական մեռուցումներն ու ջերմեռանդութիւնը, մանաւանդ թէ ալ աւելի շատցուց զանոնք: Իր մարմնոյն վրայէն խայթոցաւոր քուրծ մը կը հագուէր, բայց գոհ չըլլալով անկէ, Բերիոյ մէջ գտաւ բարեպաշտ մէկը որ իրեն համար կաշիէ զգեստ մը շինեց կուրծքին վրայ երկու հատ պզտիկ խաչերով և կրնակին վրայ խոշոր խաչ մը, բոլորն ալ երկաթէ սուր սուր խայթոցներով կազմուած, և մկասաւ զայն կրել: — Այն օրը որ դէպի կիպրոս ճամբայ պիտի ելլէին, Բերիա հասաւ Ասոյ կաթողիկոսը իրեն օգնական եպիսկոպոսով մը և միասին նաւ մտան դէպի Հոռվմ երթալու համար: Կաթողիկոսը խակոյն ետեէ եղաւ որ Յովիսան վարդապետն ու Միիթար

սարկաւազը իրեն ձգէ, խոստանալով անոնց որ մէկը եպիսկոպոս կը ձեռնադրէ և միւսն ալ քահանայ, որպէս զի շրեդութեամբ ու բազմութեամբ Հոռմ մըտնայ: Յովիսան վարդապետ յանձնառու եղաւ, բայց Միիթար բոլորովին մերժեց՝ սաստիկ խոնարհութեամբ, ինքզինքը գեռանպատրաստ համարելով քահանայական պատիճանի: Կիպրոսի մէջ կատարուեցաւ Յովիսան վարդապետի եպիսկոպոսական օծութիւնը շատ հանդիսաւոր կերպով, և այն օրը եղաւ զբեթէ վերջինն իրենց մըտերմական եղբայրութեան: Միիթար սաստիկ ջերմէ բոնուելով ստիպուեցաւ հոն մնալ, մինչ Յովիսան եպիսկոպոսը արտասուալից գրկախառնութեամբ տուաւ իր հրաժարական ողջոյնը և նաւը մեկնեցաւ դէպի Խտալիա: Օտար երկրի մէջ, անօգնական, միայնակ, լքուած և մանաւանդ թէ հալածուած ու մանարզուած, Միիթար կրեց այնպիսի ցաւեր, զորս անկարելի է նկարագրել. իր հոգւոյն արիութիւնը և Աստուծոյ պահապան նախախնամող ձեռքը միայն եղան իրեն անբաժան Ընկերները: Ա. Մակար վանքին կրօնաւորները, որոնց քով բերած էին հիւանդու մահամերծ Միիթարը, զիանալով որ նա ուղղափառ է և Քաղկեդոնի Ժողով-

ըին պաշտպան, ատելութեան հոգւով վառուած չուզեցին բնաւ երեսը նայիլ. վանքին տանիքին վրայ շինուած խոնաւ՝ խարխուլ սենեակ մը տուին իրեն, ուր ոչ կապերտ մը կար և ոչ ծածկոց մը որ խեղճ հիւանդը վրան առնուր, և ամէն կողմէն հովք կը փշէր և անձրեը կը կաթէր: Զկար մէկը որ իրեն ուտելիք մը բերէր, այլ ստիպուած էր ինքն անձամբ երթալ խոհանոց և հոն ծառաներէն պատառ մը հաց խնդրել անօթութենէ չըմեննելու համար: Ծառաներն ալ արեղաներէն աւելի փափուկ սիրտ չունէին, առանց նայելու իր խեղճ ոգեսպառ վիճակին կը նեղանային ու կը յանդիմանէին զինքը թէ ինչո՞ւ այլոց հետ հասարակաց սեղանի ժամանակ չգար, և նախատինքներով առջեը կը նետէին կտոր մը գարիէ հաց և աղած ձիթապտուղ ուրոնք աւելի ևս կը սաստկացնէին ջերմը. բայց ինքը Աստուծոյ դիմաց արտասուազին շնորհակալութեամբ կ'ուտէր զանոնք և բերնէն փոքրիկ տրտունջ մը չէր հանէր: Անգամ մը Եփեսոսի Ս. Ժողովքին տօնն ըլլալով, արեղաները այն ժամանակի սովորութեան համաձայն եկեղեցւոյ մէջ երգեցին շարականի յաւելուած երեք մոլորական տուները որոնց մէջ նզովք կը

կարդացուի Քաղկեդոնի Ժողովքին և մանաւանդ Ս. Լոռն քահանայապետին: Ժամերգութիւնն աւարտելէ վերջ ամէնքը խուռն բազմութեամբ թափեցան Մխիթարյաց խուցը և կը բռնադատէին որ ինքն ալ այն տուները երգէ: Ջերմին ամենէն սաստիկ ժամանակն էր և խեղճը գրեթէ մահամերձ կը տառապէր, սակայն ճըշմարտութեան սէրը վառեց դարձեալ զինքը, ուժ տուաւ իր անձին և բանալով հոգեբուղի թերանը առանց ակնածութեան յանդիմանեց անոնց չարութիւնն ու տըգիտութիւնը. մի առ մի բոլոր Ս. Հայրերու խօսքերով բացատրեց անոնց Ս. Լոռնի և Քաղկեդոնի վարդապետութիւնը և այնպիսի կորովով և այնքան իմաստութեամբ և հմտութեամբ խօսեցաւ, որ ամէնքը ափշած ու պապանձած զլուխնին կախած ես դարձան և այլ ևս չըհամարձակեցան հաւատքի համար նեղել զինքը: Բայց հիւանդութիւնը օրէ օր ծանրանար՝ բոլորովին անխնամ մնալով. ջերմը կը սաստկանար այն սատիճան որ Մխիթար բոլորովին ինքզինքը կորուսած, առանց ըրածը զիտնալու կ'ելլէր խուցէն դուրս և քաշկրտուելով կ'երթար մինչև պարտէզ ու կը նետուէր աւազանի մէջ ուր սառն ջուրի ազդեցութեամբ սաստիկ դո-

դով կը զգաստանար և դուրս ելլելով աւազանին քով կ'իյնար կը մնար աւելի մեռած բան կենցանի. և չորս կողմը կը վիստային օձերը. Երկար ժամեր այսուէս մնալէ վերջ՝ հազիւ քիչ մը ուժ կը զգար վրան դարձեալ սողոսկելով ու բաշկըր տուելով մինչեւ իր խուցը երթալու. Երայս հանդիպեցաւ շատ անգամ և արեղաները կը տեսնէին, բայց ոչ ոք կը գրթար վրան. Աստուած ինքը միայն կը պահպանէր իր ծառան որ այսքան նեղութեանց ու տառապանաց մէջ անգամ անդադար կ'աղօթէր և Ա. կուտին միսիթարական տեսիլքին յիշատակաւ կը բաջալերուէր. Բարեբաղդաբար քիչ ատենէն հոն եկաւ եպիսկոպոս մը՝ որ տեսնելով Միսիթարայ թշուառ վիճակը, որ բոլորովին հիւծած ու կմախք դարձած օրէ օր կընար մեռնիլ, զթայսւ վրան և սիրտը ելած սկսաւ հայրաբար խնամել զինքը. նոյն իսկ ինքն անձամբ կ'երթար խոհանոց և իր ձեռքով կը պատրաստէր անոր պէտք եղած մուռնդը. Այսու հոգի առաւ խեղճ պատանին և քիչ ժամանակի մէջ այնքան զօրացաւ, որ սիրտ ըրաւ թողլու այդ վանքը և դառնալու իր հայրենիքը, ուր վստահ էր վարել վարքը ալ աւելի եռանդեմք. Աստուծոյ շնորհքը արեու լուսոյն պէս կը փայլէր իր վրայ և իր սըր-

զուր է ըսել թէ որքան տառապեցաւ այս դարձի միջոց. ամիսով ճամբու համար չունէր ոչ ձի, ոչ զրամ, ոչ ուտելիիր և ոչ զգեստ. հագուստները բուլոր մաշած ու բզբսուած էին. կօշիկները ժայռերու, ձուրերու մէջ բալելին բոլորովին պատուեցան և ստիպուեցաւ նետել զանոնք ու բոկոտն բալել: Քանի քանի անգամներ կիսամեռ ինկաւ ճամբուն վրայ. բայց միշտ Աստուծով զօրացած, օրնենելով իր սուրբ կամքը, շարունակեց ճամբան և հասաւ Սեբաստիա: Քաղքին մէջ շատոնց լուր տարածուած էր որ Միսիթար Կիպրոսի մէջ ծանր հիւանդացած ու մեռած է, և զեռ այն առաւօտը այս տիսուր լուրը հաղորդած էին նաև իրեն մօքը: Հառաչանք, լաց ու ողբեր իրենց տունը կը լեցնէին երբ յանկարծ ներս մտաւ Միսիթար, աւելի կմախք՝ բան կենդանի մարդ, և ինկաւ ոգեսպառ մօքը զիրկը, որ չէր կընար իր աչքերուն հաւատալ: Բնտանեկան գորովն ու խնամք շուտով բժշկեցին դարձեալ զինքը և նորէն բոլորովին առողջացած քաշուեցաւ Ա. Նշանի վանքը, և հոն սկսաւ դարձեալ շարունակել իւր առարինասէր վարքը ալ աւելի եռանդեմք: Աստուծոյ շնորհքը արեու լուսոյն պէս կը փայլէր իր վրայ և իր սըր-

թեան և եղբայրսիրութեան։ Ըմբռնած՝ իրեն վիճակին բարձրութիւնն ու սրբութիւնը, և թէ ինչպիսի մեծ ու ծանր պարտք յանձն առած է քահանայութեամբ Աստուծոյ առջև, ամենայն եռանդեամբ ու խոնարհ աղօթիւք և գանտղան մեռելութեամբ Աստուծոյ շնորհը և օգնութիւնը կը խնդրէք. անդադար կ'աշխատէք ու կը գործէք եռանդեամբ՝ ժողովրդեան հոգեոր պիտոյքը լեցնելու, և իր բարի վարուց օրինակաւ ու հոգելից խրատներով ամենուն կը սորվեցնէք առաքինութեան ու սրբութեան ճամբան։

Մեր երկրի շատ կողմերը քալած էր արդէն Միխթար, երբ զեռ սարկաւագ էր, որպէս զի կարենայ հոգեոր կենաց և ուսմանց առաջնորդ մը գտնել. բայց իրեն այնչափ հոգնութիւնն ու տառապիւն անօգուտ եղած էր։ Տեսած էր ամենէն աելի հոչակաւոր վանքերը և այլ և այլ տեղերու քահանայից տղիտութիւնը և իրենց սուրբը աստիճանին անարժան վարը։ Ժողովուրդն ալ ամէն կողմ լքուած առանց հոգեոր առաջնորդութեան, պառակտուած կրօնական խընդիրով՝ որոնք չէր հասկնար և որ սխալ բացատրուած էին իրեն, և որ աւելին է, թանձր տղիտութեամբ՝ ամէն


տին կրակը կը վառէր հոգեոր սիրով ամենուն սրտերը որ իրեն կը մօտենային կամ իր անոյշ խրատները կը լսէին։ Հասած էր Աստուծոյ սահմանած ժամանակը զինքը հոգիներու լուսատու առաջնորդ կարգելու, և ինքն ալ զգաց սըրտին մէջ. այնպէս որ այլ ևս չկարենաւ լով դիմադրել ժողովրդեան աղաչանաց և ամենուն յորդորներուն, յանձն առաջահանայութեան Ո. աստիճանն ընդունի շատ օրեր հոգեոր կրթութեամբ և աղօթքներով պատրաստուելէ վերջ։ - 1696 ին, քսան տարեկան հասակին մէջ ձեռնադրուեցաւ քահանայ, յայտնապէս տեսնելով որ այդ էր Աստուծոյ կամքը։ Ի զուր էր այլ ևս հրաժարիլը՝ պատճառ բերելով քահանայութեան Ո. աստիճանին բարձրութիւնը և իր հիւանդու առաջութիւնն ու մանաւանդ տարիքին պատիկութիւնը. ժողովուրդը այն աստիճան իր բարոգներէն ոգելուած էր՝ որ իրեն այսպիսի խոնարհական հրաժարումը փոխանակ զանոնք իրենց դիտումէն ետ կեցնելու, ալ աւելի կը բորբոքէին։

Չեռնադրութեան վայրկենէն՝ բոլորովին նոր արիութեան հոգի մ'իջաւ Միխթարայ վրայ. արդէն իսկ եռանդուն տաք սիրտը հնոց մը դարձաւ աստուածսիրու-

տեսակ ախտից ու մոլութեանց մէջ ընկըզմած էր: Ազգին այս խեղճութիւնը տեսնելով Միհիթար, կու լար ու կ'աղօթէր միշտ. իսկ հիմայ որ քահանայութեամբ իրեն յանձնուած էր հոգւոց փըրկութեան գործը, անդադար արտասուօք լոյս կը խնդրէր Աստուծմէ և կը մտածէր որ ինչպէս դարման մ'ընէ այս խեղճութեան: Սակայն Աստուծմ փուլով լուսաւորեց զինքը Հոգւոյն Սրբոյ ներշնչմամբ. գիտցաւ որ ինքն անձամբ չկրնար հասնիլ ամէն կողմ. և թէ ազգին այսպիսի թշուառութեան ուրիշ դարման չկայ, բայց եթէ սուրբ և զիտուն քահանաներ պատրաստել՝ ու զրկել զանոնք ժողովը դեան մէջ, որ թէ քարոզութեամբ հաւատացեալները խրատեն և թէ ուսմամբ դաստիարակեն ու լուսաւորեն երիտասարդութիւնը: Այս խորհուրդն օրէ օր ալ աւելի արմատացաւ իրեն սրտին մէջ, և Ա. Աստուծածնայ մայրական պաշտպանութեան վրայ վստահացած՝ ուրեց վանք մը հաստատել որ ըլլայ միանգամայն թէ առաջինութեանց և թէ զիտութեան օթեւան մը, ուր եռանդուն սրտեր պատրաստուին Աստուծոյ փառաց և ազգին օգտին համար անձնանուիրութեամբ աշխատելու:

Կայ քան զայս աւելի վսեմ գաղափար մը. սակայն Աստուծած միայն կրնար ներշնչել զայս Միհիթարայ պէս մէկու մը, որ՝ մարդկորէն դատելով, զուրկ էր ամէն կարեսոր միջոցներէ այսպիսի ծանր գործ մը գլուխ հանելու. չունէր ոչ մէկ զրամ և ոչ ալ ազեցիկ՝ եկեղեցական կամ աշխարհական ձեռնտուներ . Աստուծած միայն իր հայրենի նախախնամութեամբ կը տնօրինէր ամէն ինչ իւր այս սուրբ ներշնչումն ի գլուխ հանելու համար: Բայց գեռ շատ բան պիտի կրէր Միհիթար, շատ նեղութիւններ պիտի բաշէր մինչև որ իր սուրբ նպատակին հասնէր: Յաղթանակի պսակները կը դրուին միայն քրտնալից ճակատներու վրայ. Միհիթար պայծառ տեսաւ իր առջև բացուած տաժանակիր ասպարէզը, բայց աստուծային սիրով վառուած՝ արիաբար նետուեցաւ ամէն վշտաց զիմագրաւելու. Աստուծած զինքը կը դրէր, Աստուծած ինքը պիտի հասցնէր վախճանին: Այս վայրկեանէն կազմուեցաւ Միհիթարայ դրօշակը, իր և իրեն միաբանութեան գործունէութեան նշանաբանը, Աստուծոյ և Ազգի՝ համար Սրբուրեամբ ու Գիտուրեամբ:

Միհիթար սակայն այսպիսի վսեմ գաղափարի առջև, զիտաւով հանդերձ որ



Տեսիլք Տիրամօր առ ՄիԱթար:

Աստուած էր զինքը գրդողը, հեռու էր բոլորովին փառասիրութեան, յանձնաւ պաստանութեան զգացումներէ. Ընդհակառակն իր յատուկ խոնարհութեամբ՝ ոչինչ ու անկարող գործիք մը կը ճանչնար ինքինքը Աստուածոյ ձեռքին մէջ, և անդադար կը պաղատէր որ Աստուած ինքը յարոցանէ կարող անձ մը որուն ձեռքին տակ ամէն անձնանուէր եռանդեամբ ու հպատակութեամբ աշխատելու պատրաստ էր ինքը: Ի զուր այս դիտմամբ զիմեց զանազան վարդապետներու և եպիսկոպոսներու, որոնց աստուածսիրութեան ու զիտութեան համբաւը իրեն յոյս մը կուտար որ կարենայ իրեն նեցուկ ունենալ զանոնք: Ի զուր երկայն ժամանակ զարձեալ թափառեցաւ Հայաստանի և Փոքր Ասիոյ ամէն կողմ, և մինչև իսկ Պոլիս ալ եկաւ: Առաջարկեց Մարգար եպիսկոպոսին, որ իրեն վարդապետական գաւազան տուած էր, և Խաչատուր վարդապետի՝ որ Հռովմէն եկած էր, իրեն զաղափարը և խնդրեց պաղատեցաւ որ անոնք յանձն առնուն նոր հաստատուելիք միաբանութեան մեծաւորն ըլլալ. բայց անոնք՝ զովելով հանդերձ իւր եռանդը, փոխանակ օգնելու՝ նոյն իսկ կը ջանային զինքը ետ կեցնել այդ գործէն՝ վհա-

տեցուցիչ խօսքերով. որովհետեւ առանց դրամ ունենալու անկարելի կը սեպէին յաջողիլը։ Այսպէս Միսիթար լքուած ամենէն՝ մնաց դարձեալ ինքը միայնակ այս աստուածային ներշնչումը կատարելու, հաստատուն վստահութեամբ Աստուծոյ և Ա. Աստուածածնայ հովանաւորութեան վրայ, որոնք արդեամբ կը զօրացնէին զինքը միշտ, և որքան արտաքին դժուարութիւնը յառնէին այնքան աւելի արիութիւն կը ներշնչէին իրեն, որովհետեւ գործը աստուածային էր։

Արդէն իսկ իր առաջին քարոզներէն սկսեալ նոր եռանդ մը սկսաւ վասուիլ ժողովրդեան սրտերու մէջ. շատ մեղաւորներ լսելով իր հոգելից իրատները դարձի կու գային և ամէնքը որ հոգեոր վիշտեր ու տագնապներ ունէին զինքը կը փնտոէին և նա ամենուն պիտոյից համար ունէր անոյշ խօսք մը, միսիթարիչ սփոփիչ խրատ մը. արիութիւն կը ներշնչէր վհատեալներու, կը փարատէր տարակոյմները և կը լուսաւորէր տպէտները։ Յոլորովին տարբեր այն ժամանակին ազգային վարդապետներէ, և լցուած սուրբ Հայրերու հոգւով՝ կը քարոզէր ամենուն սէր և հաշտութիւն, որորմութիւն թշուառներու, ներողամտու-

թիւն ու բարերարութիւն ընկերաց նկատմամբ. Ա. Գրոց խօսքերով կը ցուցնէր որ ով որ ընկերին չարիք կ'ընէ չկրնար Քրիստոսի հաւատացեալ ըլլալ. կը սորվեցնէր ամենուն թէ ինչպիսի պատրաստութեամբ ու եռանդեամբ պէտք է մերձենալ Ա. Խորհուրդներու, միով բանիւ իր խօսքը զովացուցիչ շնորհաց ջուրն էր որ առատապէս կ'իջնէր այդ ցամքած հոգիներու վրայ և առաջինութեան զգացումներ կը բուացնէր հոն։ Ամենէն աւելի կը ջանար հաւատացելոց սրտին մէջ տոգորել Յիսուսի չարչարանաց մտածութիւնը և Ա. Աստուածածնայ ջերմեռանգութիւնը. ինքը եղաւ որ շատ տեղ մըտցուց Ողջոյն Քեզ Մարիամ հրեշտակային աղօթքն ըսելու սովորութիւնը։ Եւ որպէս զի աւելի զիւրացնէ ջերմեռանգութիւնը՝ գեղեցիկ աղօթքներ ու տաղեր կը գրէր և անոյշ եղանակներ յարմարցնելով անոնց կը սորվեցնէր ժողովրդեան, որ մինչև այսօր գեռ տեղ տեղ եկեղեցիներու մէջ կ'երգէ զանոնք։ Հիւանդներու համար ունէր յատուկ զութ. կը խնամէր զանոնք ու կը միսիթարէր՝ քաջալերելով և սփոփելով. ծայրագոյն անճնանուիրութեամբ սքանչելի երկցաւ մանաւանդ ժանտախտի միջոց, վազելով ամենուն քով և

խնամելով՝ մինչև որ ինքն ալ բռնուեցաւ և միայն Աստուծոյ պահպանութեամբ առողջացաւ առանց մարդկային դեղերու Այս առթիւ տեսնուեցաւ իր վրայ թէ ո՞րքան լի էր աստուածային սիրով՝ անձան համակամութեամբ և միշտ Աստուծոյ Սուրբ կամքն օրհնելով և բնաւ տրտունջ մը չհանելով բերնէն մարդկանց ապերախտութեան գէմ, որ մինչդեռ ինքը իր անձը զոհած ուրիշները խնամելու համար բռնուած էր ժանտախտէ, չգտնուեցաւ անոնցմէ մէկը որ փոխաղարձ զինքը իրնամէ. միայն իր քովն անդադար կը հըսկէր իրեն աշակերտ պատանի մը:

Միթիթար այլ և այլ կողմեր քարոզութեան համար պարտելով շատեր աղաջեր էին որ իբրև աշակերտ ընդունի զիրենք, բայց նա այսպիսիներու մէջէն ընտրեց միայն երեք չորս պատանիներ որոնք ճշշմարիտ կոչման շնորհը կը ցուցնէին վրանին՝ աստուածսիրութեամբ: Երբ տեսաւ որ ամեներն յոյս չկայ օտարներէ իր մեծ գաղափարը զլուխ հանելու համար, որուն անհրաժեշտ կարեռութեան վրայ օրէ օր աւելի համզուած էր, թողուց այլ ևս ամէն փորձ և դարձաւ նորէն Պոլիս, յանձնելով իր աշակերտաց՝ որոնց մին արդէն քահանայ ձեռնադրուած էր՝ որ

գան և հոն միանան իրեն. միտքը գրած էր այլ ևս հոն հաստատել վանատուն մը ուր իրեն աշակերտները դաստիարակելէ վերջ կարենայ զանոնց զրկել Հայաստանի զանազան կողմեր քարոզութեան համար:

Միթիթար վարդապետի համբաւը Պոլսոյ մէջ դեռ ամենուն բերանն էր, իր առաջին գալէն ի վեր, երբ յանկարծ երկցաւ հոն զարձեալ՝ մի և նոյն առաջելական հոգւով ու մի և նոյն եռանդեամբ հոգւոց փրկութեան: Հոն իսկոյն բարեպաշտներու տուած ողորմութեամբ բերայի մէջ փորբիկ տուն մը վարձեց, ուր ժողվեց իր աշակերտները, որոնց վրայ շուտով ուրիշներ ալ աւելցան, և սկսաւ անոնց սորվեցնել հոգեսոր խրատներ և Ա. Գրոց մեկնութիւններ, հաւատոյ վարդապետութիւնները մի առ մի Ա. Գրբէ և Ա. Հայրերէ քաղուած վկայութիւններով հաստատելով: Եւ որպէս զի օտարներու աչքին չզարնէ և արգելք չըլլան, միւսնոյն սենեակին մէջ ուր իրենց ումանց և հոգեսոր աղօթքներուն կը զբաղէին, զրաւ նաև զիրք կազմելու գործիք, այնպէս որ երբ յանկարծ օտար մը ներս մտնէր՝ իսկոյն ամէնքը կը սկսէին թերթեր ծալլել ու կարել՝ մինչև որ իրա-

թար, յետոյ դարձեալ կը շարունակէին իրենց աղօթքը կամ ուսումը։ Այսպէս ամէնքը մէկ հոգւով վառուած, իրենց նպատակ զնելով Ասոււծոյ փառքը և հոգիներու փրկութիւնը, սերտ եղբայրութեամբ կապուած իրարու հետ օրէ օր կը զարգանային առաջինութեանց և ուսմանց մէջ։ Ինքը՝ Մխիթար վարդապետն ալ դուրսը եկեղեցիներու մէջ կը շարունակէր իր քարոզութիւնները շատ դարձել կատարելով մեղաւորաց և շատերու սոր վեցնելով արքայութեան ճամբան։ Անվեհ էր և աներկիւր արիութեամբ կը խօսէր մանաւանդ կրօնական այն խնդիրներու վրայ որոնց նկատմամբ պառակտում կար այն միջոց ազգին մէջ և շարունակ կը ոփւներ պակաս չէին։ Կը բացատրէր թէ ինչպէս ուղղափառները հալածողը՝ իրենք ալ նոյն վարդապետութիւնները կը դաւանին Ա. Պատարագի և Ժամերգութեան աղօթից մէջ, և թէ ինչպէս միենոյն վարդապետութիւնները բարոզեր են միշտ մեր Ա. Հայրերը՝ Գրիգոր Լուսաւորչէն, Ա. Սահակէն, Ա. Ներսէսէն սկսեալ մինչ Շնորհալի և Լամբրոնացի Ա. Հայրապետները, ամենուն խօսքերը մէջ բերելով և կը յորդորէր որ մէկդի թողլով անձնական կիրքերը հետեւին ճշմարտութեան

լոյսին և վերնայ Քրիստոսի հաւատացելոց մէջէն ատելութեան որոմք։ Եւ իր հոգեբուխ խօսքերը՝ աւելի զօրացած իր սուրբ վարքին օրինակովը, մեծ ազդեցութիւն կ'ընէին հաւատացելոց վրայ. շատեր կը դառնային՝ կը ճանչնային ուղղափառ վարդապետութեան ճշմարտութիւնը և ուղղափառներ՝ ալ աւելի կը հաստատուէին իրենց կրօնից մէջ։
Բայց վարդապետներէ և եպիսկոպոսներէ շատերը չէին հանդուրժեր այսպիսի համարձակ քարոզչի՝ որուն սուրբ վարքը և հոգելից քարոզները յանդիմանութիւն էին իրենց անարժան վարուց։ Անգամ մը Գրիգոր անունով եպիսկոպոս մը հասարակաց հակածառութեան բռնուեցաւ իրեն հետ կրօնական խնդիրներու վրայ և տեսնելով որ Մխիթարայ հմուտ և իմաստուն խօսքերուն տալիք պատասխան չունի, սաստիկ զայրացած ապտակ մը զարկաւ անոր. իսկ Մխիթար անայլայլ և անձայն համբերեց հրեշտակային հեղութեամբ մը. որուն զիմաց իսկոյն կալուցաւ եպիսկոպոսին սիրտը, ճանչցաւ ճշմարտութիւնը և Մխիթարայ մեծ բարեկամներէն մէկն եղաւ։ Ուրիշ անգամ մ'ալ ծողովուրդը սաստիկ յուզուած՝ զիշերանց ժողովը ըրեր էին որ ուղղափառ-

ները մատնեն դատաւորին. հազիւ թէ ի-
մացաւ Միսիթար այս խորհուրդը, առա-
ւոտը կանուխ գնաց եկեղեցի և սկսաւ սի-
րոյ և հաշտութեան վրայ քարոզ տալ.
բայց հոգիներն այնքան զրգուած էին որ
իր հոգելից խօսքերն անգամ ազդեցու-
թին ըրբին, և սկսաւ ժողովուրդը խուռն
դուրս ելլալ դատաւորին երթալու համար:
Այս ատեն աստուածային նախանձով լե-
ցուեցաւ Միսիթար, առաւ խաչը խորա-
նին վրայէն և վազեց ժողովրդեան առջե
և ըստւ. « Ահաւասիկ ես. եթէ կ'ուզէք
ուղղափառները մատնել դատաւորին,
մատնեցէք զիս ամենէն առաջ, ես եմ
ուղղափառութեան քարոզողը »: Այս վը-
սեմ համարձակութեան վրայ լոեցին ա-
մէնքը և դադրեցան իրենց խորհուրդէն:
Սակայն քիչ տեսեց այս խաղաղութիւնը,
և հալածանըն աւելի սաստկացաւ՝ մա-
նաւանդ քանի մը քահանայից դէմ որոնց
մին էր նաև Միսիթար, և կ'ուզէին բրո-
նել ու թիապարտութեան մատնել զիրենք:
Իսկ հալածողներուն գլխաւորն էր ինքը
պատրիարքը, չարասէր ու կոռաւրար
մէկը:

Միսիթար տեսնելով որ անկարելի է
Պոլսոյ մէջ մնալ, ժողից երեկոյ մը բո-
լոր իր աշակերտները, եռանդուն սրտով

մը խօսեցաւ անոնց դիմաց, յայտնեց իր
նպատակը միաբանութիւնը կազմելու որ
մէկ հոգւով ու մէկ սրտով Աստուծոյ փա-
ռաց և հոգիներու փրկութեան համար աշ-
խատին. զրաւ անոնց առջեւ ամէն զժուա-
րութիւններն ու նեղութիւնքը որոնց պի-
տի հանդիպէին եթէ ուզէին իրեն հետ
միանալ այն սուրբ գործին համար, զո-
հելով մինչև իսկ իրենց արիւնը՝ որովհե-
տև սաստիկ էր հալածումը, և արիւական
հոգւով զօրացած ներշնչեց անոնց ամե-
նուն սրտին մէջ ալ աստուածային քա-
ջալերութիւն մը: Ամէնքը միաբան ծըն-
ծագիր խաչելութեան և Ա. Աստուածած-
ուայ պատկերին առջեւ ուխտեցին եղայ-
նայ միութիւնը Աստուծոյ փառաց հա-
րական միութիւնը Աստուծոյ փառաց հա-
նգամանեցին իրենց նշանաբանը՝
մար. սահմանեցին իրենց նշանաբանը՝
Որդեգիրը կուսին Վարդապետը Ապաշխա-
րութեան. նուիրեցին իրենց զիրենք Աս-
տուծոյ՝ կրօնաւորական ուխտերով և
յանձնուեցան Ա. Աստուածածնայ մայ-
րութեան խնամոց: Այն օրը սեպտեմբե-
րի 8էր 1701ին. օր նուիրական՝ Միսի-
թարեան Միաբանութեան համար և տօն
Ա. Աստուածածնայ ծննդեան զոր ուխ-
տեցին ամէն տարի հանդիսապէս տօնել:

Ելան ամէնքը քաջալերուած ու զօրա-
ցած չոգւով Արքով, և եղբայրական ող-

ջունիւ՝ արտասուօք ցըռուեցան ամէնքն ալ խոստանալով որ փութով երթան միանան դարձեալ Մոռէայի մէջ որ վենենելկեցւոց իշխանութեան տակ կը զըտնուէր և ուր կ'ուզէին հաստատել իրենց վանքը :

Այն պահուն յորում Միսիթար ելած Բերայի տունէն կը փախչէր, ճամբուն վրայ հանդիպեցան զինուորներ իրենց հայ առաջնորդով որ զինքը բռնելու կու գային. բայց Աստուած փակեց իրենց աչքերը, անցան քովէն ու գնացին առանց զինքը ճանչնալու։ Նոյնպէս Զմիւնիայ համելով ստիպուեցաւ դարձեալ պահուիլ Յիսուսեանց վանքին մէջ, որպէս զի կարենայ ազատիլ զինքը փնտողներու ձեռքէն :

Ս. Կոյսը որ միսիթարած էր Միսիթար պատանին Սևանայ մէջ երենալով իրեն, դարձեալ միսիթարեց զինքը հիմակ ալ իւր մայրական խնամքով և ահաւոր ալեկոծութենէ մ'ազատելով զիրենը դարձեալ անվտանգ հասցուց միացուց զամէնքն ալ ի Մոռէա։ Շուտով իրենց բարի վարուց և սրբութեան անուշ բոյըը հիացուց այն կողմի բարեպաշտ ժողովուրդն ու մեծամեծները, որոնք առատաձեռնութեամբ տեղ տուին Մեթոն բեր-

դաբաղաբին մէջ՝ որպէս զի կարենան վանք շինել ու հոն հաստատուիլ։ Բայց Աստուած ուրիշ տեղ սահմանած էր Մը խիթարայ համար :

Տասուերկու տարի մնացին Մեթոն՝ ուր իրենք աղքատութեամբ հանդերձ շինած էին գեղեցիկ վանք մը և եկեղեցի, և Մըրազան Քահանայապետը Հռովմէն հաստատութիւն տուած էր իրենց միաբանութեանը՝ Ս. Բենեդիկտոսի կանոններուն պահպանութեամբ և Միսիթար վարդապետն անուանելով առաջին Արքահայր։ Յանկարծ նոր ամպեր զիզուեցան և վայրկեան մը սպառնացան այս նորահաստատ Միաբանութիւնը վտանգել։ Արիւնահեղ պատերազմ մը բացուեցաւ վենետիկեցւոց և Տաճկաց մէջ՝ որոնց ձեռքն ընկաւ Մեթոն և աւերակ դարձաւ ամէն ինչ։ Միսիթար ստիպուեցաւ այն ատեն թողուլ իր այնչափ քրտամբք կառուցած վանքը՝ և աշակերտներն առած ապաւինեցաւ ի Վենետիկ, ուր իրենցմէ շատ առաջ հասած էր արդէն իրենց բարի վարուց համբաւը։ Հոս Հասարակապետութեան մեծամեծ անդամք որ արդէն Մեթոնի մէջ ճանչցեր ու սքանչացեր էին Միսիթարայ վրայ, և հիմայ տեսան որ աղքատ անինչ անօգնական ապաստանած է իրենց, ամէն օգ-

նութիւն փութացին ընել։ Այսպիսի մեծ ձախորդութեան լուրն չոռվմ հասնելով, թրորականդայի Ա. Ժողովն ալ զրեց իսկոյն միսիթարական նամակ մը Միսիթար Աքրահօր, քաջալերելով զինքը և իրեն ընկերները չլքանիլ բնաւ, այլ Աստուծոյ նախախնամութեան վրայ վստահացած առաջ տանիլ այնքան արիաբար սկսած աստուծահաճանոյ գործերնին. յանձնարարեց նաև զիրենք վենետիոյ ծիրանաւոր պատրիարքին որ օգնէ իրենց և ամէն սիրալիր ձեռնտուութիւն չզլանայ։ Այսպէս քաջալերուած, Միսիթար վարձեց փոքրիկ տուն մը Ա. Մարգինոս եկեղեցոյն կից, և հոն ապավինեցաւ իրեններուն հետիւն իրենց օրապահիկ ապրուսալ կը ճարէին հաւատացելոց նուիրած պատարացներու ողորմութեամբ, մինչև որ Աստուծոյ օգնութեամբ վենետիոյ Դուքսը նուշրեց իրենց մշտնջնենաւոր բնակութեան համար լճակի փոքրիկ կղզիներէն մին, որ Ա. Ղազար կը կոչուէր, հին ատեն իրրե բորոտներու հիւանդանոց ծառայած ըլլալուն համար։ Բայց սատանան չէր դադրէր և ամէն հնարք կը ջանար ի գործ դնել Միսիթարայ սուրբ գործը իսականներու համար. նոր և ամէնէն աւելի բուռն հակառակութիւնն անգամ մ'ալ հանեց իրեն դէմ,

հալածանք զբարտութեանց։ Զարերու նախանձը՝ որ իրրե ուղղափառ հալածեր էր զիրենք Պոլսէն, տեսնելով որ անոնք աւելի լաւ կը հաստատուին Եւրոպայի մէջ, և կսաւ հիմայ հալածել զիրենք ու ամբաստանել իրըն հերետիկոսներ՝ Հոռվամայ Քահանայապետին առջեւ զանազան սուս զբարտութիւններ գրելով իրենց վրայ։ Ակայն յաղթանակող է արդարութիւնը, և Աստուծոյ օրհնութիւնն ու օգնութիւնը և Ա. Աստուծածնայ մայրական պաշտպանութիւնը փութով տեսնուեցան իրենց վրայ. վասն զի այն օրը յորում թշնամիք Պոլսոյ մէջ ուրախ զուարթ խնջոյք կը Կատարէին համարելով որ Միսիթարայ միաբանութիւնը Ջնջելու յաջողեցան, ճիշտ նոյն օրը և նոյն ժամուն վենետիոյ ծերակոյալ պետական ժամուն պահանջման միջոց մը կ'առնու իր փառաց։

Միսիթար և իր աշակերտները առաջին անգամ մտան Ա. Ղազարու վանքը 1717 Սեպտ. 8ին և սրտերնին անպատմելի

ուրախութեամբ լեցուած, հանդիսով տօ-
նեցին Ա. Աստուածածնայ հրաշափառ
ծնունդը: Այլ այս դեռ մաս մ'էր այն
յաղթանակին և ուրախութեան գոր Աս-
տուած պահած էր իր հաւատարիմ ծա-
ռային: Հազիւ թէ Միկթար իրենները
տեղաւորեց նոր վանցին մէջ, փութաց
ինքը երթալ Հռովմ, ուր մեծ պատուվ
ընդունուեցաւ Արքազան Քահանայապե-
տէն որ շատ անգամ օրհնեց զինքը և
իւր միաբանութիւնը և քաջալերեց որ ա-
րիաբար շարունակեն իրենց սկսած աս-
տուածահաճոյ գործը Աստուծոյ փառաց
և հոգւոց փրկութեան համար, առանց
վախնալու մարդկային չարութեան հա-
նած հակառակութիւններէ: Յանձնեց Ա.
Քահանայապետը՝ կարդինալաց ժողովոյն
որ քննեն բոլոր եղած ամբաստանութիւն-
ները, որոնց ամէնն ալ սուտ զրպար-
տութիւններ հոչակուեցան և աւելի փայ-
լեցաւ Միկթարայ և իրեններուն անմե-
դութիւնը: Այսպէս՝ ուրախութեամբ և յա-
ջողութեամբ դարձաւ Միկթար իր սիրե-
լի վանքը, զոր հետզետէ աւելի շինեց
ու շտկեց և բոլորովին աղքատ ըլլալով
հանդերձ, բոլոր իւր յոյսը Աստուծոյ և
Ա. Աստուածածնայ պաշտպանութեան վը-
րայ դրած՝ ըրաւ զայն գեղեցիկ օրինա-

կելի վանք մը՝ կրօնաւորական պարզու-
թեամբ ու մաքրութեամբը. և ինքն ան-
ձամբ անոր հարտարապետութիւնը կ'ը-
նէր: Զարմանալի բան է թէ ինչպէս կը
հասնէր ամէն կողմ. նոր շինուած վան-
քին ամրող գործերն իր վրան էին. ին-
քը շարունակ անձամբ կը հսկէր գործա-
ւորաց աշխատութեան, առաքինութեանց
ու գիտութեանց մէջ կը հրահանգէր իր
աշակերտները, ամէն նիւթերու և ուս-
մանց դասեր կ'աւանդէր, դասագրքեր կը
գրէր: Անդադար հոգեկոր խրատներով և
Ա. Գրոց մեկնութիւններով կը պատրաս-
տէր իրեն աշակերտները քարոզութեանց
և քահանայ ձեռնազրել տալով զանոնք,
կը դրկէր մեր երկրի ամէնէն աւելի կա-
րօս ու լքեալ քաղաքներն ու գիւղերը:
Գիրքեր կը գրէր ու կը թարգմանէր և
տպագրել տալով կը ցրուէր զանոնք ազ-
գին մէջ. բաց աստի անթիւ նամակա-
գրութիւններով կ'առաջնորդէր իրեններուն
և կը միխթարէր բոլոր իրեն զիմողները.
մէկ կողմանէ ալ շարունակ այցելութիւն-
ներ կ'ընդունէր վենետիկոյ ժողովրդենէ և
մեծամեծներէ որոնք Միկթարայ և իր
աշակերտաց առաքինի վարուց համբաւը
լսելով կու գային իրենց տեսութեան և
հոգեկոր միխթարութիւն և առաջնորդու-

թիւն գտնելու։ Եւ այս ամէն բանով հանդերձ՝ իր հոգեոր աղօթքներէն և մտածականներէն ալ բան մը զանց չէր ըներ բնաւ, մանաւանդ թէ հետզհետէ աւելի կը շատցնէր զանոնք և մեռուցումները՝ սրտին ջերմ եռանդեան անդադար բորոքմամբ։

Սակայն հասած էր մրցանակի ժամը։ Այսափ գործերէ և մանաւանդ երկար տարիներու մէջ ունեցած այլեայլ ծանր վիշտերէն ու անդադար ճգնազգեաց մեռուցումներէն և ծոմ պահելէն՝ այլ ևս տկարացած էր մարմինը, և չէր կրնար դեռ երկար ատեն իր մէջ պահել այդ եռանդուն հրեղէն հոգին որ բոցի նման դէպ ի վեր կ'ուզէր սլանալ. վայրկեան մ'առաջ երկինք կը փութար Աստուծոյ քով՝ իր այնքան քրտանց ու տառապանց փոխարէն արդեանց պսակն ընդունելու։ Միաբանութիւնը հիմնելէն ի վեր Միխթար քառասուն ինը տարի անդուլ անդադար գործած էր իրեն աշակերտներով Աստուծոյ փառաց և ազգին օգտին համար, գրած էր անթիւ գիրքեր, քերականութիւններ, քրիստոնէականներ, տաղեր ու շարականներ, աղօթագիրք և զանազան հոգեոր և ուսումնական հատորներ ու Ա. Գրքի մեկնութիւններ, բառ-

գիրք, աստուածաբանութիւն և այլն։ Իր աշակերտներն ալ ցրուած ամէն կողմ, առաքելական հոգւով վառուած և անձնանուէր սրտով մեր աշխարհի մէջ կը սրփուէին աստուածապաշտութիւն և ուսումն և ազգին ամէն պիտոյից օգնութեան կը համնէին՝ աներկիւլ մոնելով ամէն կողմ, քարոզելով և ծաւալելով կաթուզիկէ ճըշմարտութեան լոյսը, մատակարարելով Ա. Խորհուրդները, մտնելով նոյն իսկ բանտերու մէջ։ Առաջուան ամբաստանութեանց փոխարէն՝ այժմ ամէն կողմանէ գովեստից և գոհութեան նամակներ կը համնէին՝ անոնց նկատմամբ։ Լրացած էր այլ նս իր ամենէն աւելի սուրբ և եռանդուն փափաքը. ազգը սկսած էր ճանչնալ ուղղափառ հաւատոց լոյսը և առնուլ զիտութեան ճաշակը. հասած էր ժամանակը որ ինքն ալ ծերունի Արմէնակին պէս ըսէր, Արդ արձակեա զժառայոք Տէր ի խաղաղուրիւն, զի տեսին այլ իմ զիրկուրիւն գոր պատրաստեցեր ժողովրդեան քում և երթար վայլելու երկնային փառաց պսակը։

1749 ապրիլ 27ին առաւօտը, յետ երկար ու դժուարակիր հիւանդութեան մը, յորում վերջին անգամ մ'ալ փայլեցաւ իր զիւցազնական համակամու-

թիւնը, զօրացած Ա. Եկեղեցւոյ խորհուրդներով, օրհնելով իր մահճին շուրջը ծնրադիր միաբանութիւնը և յանձնելով զայն Աստուծոյ շնորհաց ու Ս. Աստուածածնայ մայրական հովանոյն, Միսիթար աւանդեց իր անթիծ հոգին Աստուծոյ ձեռքը: Դէմքը որ երկար հիւանդութեան միշոց բոլորովին հիւծած ու կնճռած էր, հրեշտակային փայլ ու թարմութիւն մը ստացաւ իսկոյն: Կայծակի արագութեամբ տիսուր լուրը տարածուեցաւ բոլոր վենետկոյ մէջ անպատմելի տրտմութիւն պատճառելով ամենուն, որոնք փութացին իսկոյն գալ ի վանս և համրուրելով Աստուծոյ հաւատարիմ ծառային ձեռքը, իրեն պաշտպանութեան ու բարեկոսութեան կը յանձնէին իրենք զիրենք: Յաջորդ օրն ալ մեծ շքով կատարուեցաւ իր թաղման հանդէսը, որուն ներկայ կը գտնուէին երկու արքեպիսկոպոսներ և անհամար բազմութիւն քահանայից ու ժողովրդոց, ազգայիններէն և լատիններէն:

Ահաւասիկ համառօտիւ Միսիթարայ վարքին պատկերը, բայց ո՛վ կը նըկարագրել իր հոգին. այն հոգին՝ որ ի մանկութենէ սկսեալ հնոց մ'էր աստուածամիրութեան ու եղբայրսիրութեան, կը վառուէր ու կը վառէր զամէնքն իր օրինա-

կաւը. ինչպիսի եռանդն ու ամփոփածութիւն կը փայլէր վրան երբ աղօթք կ'ընէր կամ մտածական, և որքան հրավառ իղձեր երկինք կը սլանային իրեն սրտէն. իրեն խոստովանահայրերը կը վկայեն որ մինչև վերջին շունչն աւանդելը անթիծ պահեց իր հոգւոյն մկրտութեան անմեղութիւնը: Աակայն աստուածսիրութենէ նուազ չէր իր մէջ նաև եղբայրսիրութիւնը և խոնարհութիւնը, որոնք գրեթէ իր կենաց ամէն օրը զանազան գործերով ցուցուց, յաճախ նոյն իսկ դիցազնական աստիճանի մէջ: Խեղճութիւն, թշուառութիւն ու տղիտութիւն Միսիթարայ սիրառ կը յուղէին, կը գորովէր և երբ անկարող ըլլար որևէ կերպով մը թշուառներն սփոփելու, կ'աղօթէր անոնց համար ու կ'արտասուէր: Ամենէն աւելի աղքատ եղած ատենն իսկ, երբ ինքը և իրենները օրապահիկ հացի կարօտ էին, ձեռքն անցածէն աղքատաց ալ մաս կը հանէր և յաճախ ընտրելազոյն մասը անոնց կուտար, ամէն անգամ որ վանքէն զուրս ելլար, մի քանի զրամ կ'առնուր հետո՝ միացաներու համար, բարոզութեանց միշոց ալ իրեն բերուած կերակուրները անոնց հետ կը բաժնէր:

Խստիւ պատուիրած էր վանքի դոհա-

պանին որ բնաւ աղքատ մը ետ չդարձնէ առանց անոր ողորմութիւն տալու կամ իրեն իմացնելու։ Անգամ մ'ալ, մինչդեռ ինքը և վանականք կերակուրի էին, զըռանապանը մուրացկանի մը ըսեր էր որ սպասէ մինչև ճաշարանէն ելեն. հազիւթէ Աստուծոյ ծառայն իմացաւ զայս, յանդիմանեց դռնապանը և անմիջապէս ամենէն լաւ կերակուրն առնելով տուաւ որ տանի աղքատին։

Չոնէր բնաւ ստուկի աչք, մանաւանդթէ կը խորշէր և կը զզուէր. երբէք իր քարոզովթեանց ատեն գաւազանապտուզ չէր առնուր, և երբ իրեն ողորմութիւն բերէին քարեպաշտները, այնչափ միայն կ'առնուր որչափ որ նոյն վայրկենին պիտոյից համար կարեռ էր։ Անգամ մը քարեպաշտներէն մէկը տասը մարչիլ (այն ատենուան զրամը) բերաւ իրեն, բայց նա ընդունեցաւ՝ ըսելով որ այն պահուն պէտք չունի։

Ուրիշ անգամ մ'ալ հանդիպեցաւ որ հարուստ պատանի մը թախանձանօք կը փափաքէր ընդունովիլ իրեն աշակերտութեան։ Միիթար Աբբահայր ալ չտեսնելով անոր վրայ կրօնաւորական կոչման հոգին չէր ուզէր ընդունիլ։ Պատանին կարծելով թէ պիտի կարենայ յաշողիլ՝

բարեկամներու ձեռքով յայտնեց թէ ինքն այնքան դրամ ունի որ բնաւ Միաբանութեան վրայ ծանրութիւն չըլլար, և թէ իր հարստութիւնը փոխանակ աղքատաց բաժնելու վանք պիտի բերէ Միաբանութեան պէտքերուն գործածելու համար։ Ավայն բուն այս մտածութիւնն իսկ պատճառ եղաւ որ Աստուծոյ ծառայն մերժեց բոլորովին զինքը։ Վենետիկեցի հարուստ մ'ալ գիտնալով որ Միաբանութիւնն աղքատ է, օր մը մեծ գումար մը նուէր բերաւ վանք. բայց անկարելի եղաւ որ Միիթար Աբբահայր յանձն առնու ընդունիլ զայն. հիմայ, կ'ըսէր, պէտք չունինք այդչափ դրամի. և շնորհակալութեամբ ետ զլկեց բարեպաշտ նուիրատուն որ մեծապէս շինուեցաւ այսպիսի քարձր առաքինութիւն տեսնելով։

Այսպիսի ազնիւ ու զգայուն սրտի հետ, ունէր նաև պայծառ ու լուսաւոր միտք որ իր անթիւ գրուածոց մէջ կը փայլի. և իր գիտութիւնը ուրիշներու պէս գըպրոցներու կամ վարդապետներու քով ըստացած չէր, այլ բոլորովին երկնային ու հեղական շնորհաց արդինք էր։ Ուրիշները, ամէն զինքը ճանչցողները կը զմայւէին իր վրան. Հոռովմ եղած միջոց, բարութիւնալները որոնց հետ տեսնուեցաւ՝ ըս-

Քանչացած իր շնորհալի կերպին ու եռանդուն հոգւոյն վրայ, քահանայապետ ըլլալու արժանաւոր կը համարէին զինքը. մեր ազգին ալ Լիբանանու ուղղափառ կաթողիկոսը, յատուկ նամակներով կը դիմէր անոր՝ որ յանձն առնու ամբողջ իր հաստատած վանքը (Լիբանանու մէջ) իրեն առաջնորդութեան ներքե առնուլ, և նոյն ինքն կաթողիկոսը կը խոստանար իր ձեռքին տակ հպատակ կրօնաւոր մ'ըլլալ, սակայն ինքը այնչափ խոնարհ էր որ միշտ ուրիշներու հնազանդիլ ու հպատակի և այլոց ձեռքին տակ ըլլալ կը ջանար, մինչդեռ Աստուած զինքն ընտրած էր վերականգնիչ ու երկրորդ լուսաւորիչ և ճշմարիտ միմիթար մեր թըլշուառ ազգին: Այս խոնարհութեան զգացմամբ էր որ թող չտուաւ որ իրեն զիմաց պատկերը բաշուի, և երբ աշակերտները շատ պաղատեցան որ գէթ նոր շինած վանքին մէջ յատուկ յիշատակ մը թողու, յանձն առաւ միայն սեղանատան դրան վրայ արձանագրութիւն մը զնել խոնարհ բացատրութեամբ մը որ այս վանքը շինուեցաւ Միսիթարայ աբբայութեան միջոց՝ ի փառս Աստուծոյ:

Անկարելի է նկարագրել նաև իր խոհական արիութիւնը ու ճգնասիրութիւնը

և ներքին անձնուրացութիւնը, համեստ պարկեցտութիւնը և քաղցր վարմունքը իրեն ստորակարգելոց և աշակերտաց հետ՝ զորս որդիաբար կը խնամէր հայրական զութով, իր համբերատար և անյիշաչար հեղութիւնը որով հակառակորդը ու թըլշնամիք կը դառնային և բարեկամական սիրով կը կապուէին հետք: Իր մեծ եղբայրսիրութիւնը և անյիշաչարութիւնը ցուցուց անթիւ առիթներու մէջ: Ազգին մէջ ճշմարիտ բարեպաշտութիւն և ուսումն տարածելու համար, վանքին մէջ տպարան մ'ալ հաստատած էր, և տպած զիրքերէն եկած դրամով միաբանութեան պէտքերը կը հոգար: Անգամ մը մէկն իրեն բարեկամ ձևանալով ինդրեց որ հայրէն զիրքերու մայրերը փոխ տայ. և զայն առնելով սկսաւ ծածուկ նորէն տըլպակ Միսիթար Աբբասօր տպած զիրքերը և զանոնք վաճառել, որով մեծ վսակ ըլլալ Միսիթար Աբբասօր տպած զիրքերը և զանոնք վաճառել, որով մեծ վսակ կ'ըլլալ Միսիթար Աբբասօր տպած զիրքերէն ումանք սկսան գանգատիլ և կ'ուզէին դատաստան բանալ, ոչ միայն արգիլեց անոնց, այլ նաև իր կողմանէ բարեկամութեան ցոյցերն ալ չպակսեցուց այդ անձին հանդէպ. ընդ հակառակն կ'ուրախանար որ այսու ժողովրդեան մէջ բարեպաշտական զիրքեր աւելի կը տաս-

րածուին։ Նոյնպիսի հեղութիւն ցուցուց նաև այն ամենուն համար որ իրեն դէմ կամ իր աշակերտաց դէմ զբարտութիւններ կը առէին Ս. Աթոռոյ, որպէս զի իրենց արդիւնաւոր զործուէնէութիւնը խափանեն։ Միսիթար Աքրահայր ոչ թէ միայն սրտանց կը ներէր անոնց, այլ նոյն իսկ իր պաշտպանողական զբութեանց մէջ երբէց անոնց անունները չէր յայտնէր, բաւական համարելով միայն իր և իրեններուն անմեղութիւնը ցուցնելը։ Մանաւանդ թէ ձեռքէն եկած ամէն բարիքն ալ կ'ընէր անոնց։ Պատահեցաւ անգամ մը որ իր ամենէն ոխերիմ թշնամիներէ մին վենետիկ գալով, Լազարեզզոյ կը զոյն մէջ մնաց քառանդինայի. հազիւ թէ իմացաւ զայն Աստուծոյ ծառայն, իսկոյն մարդ դրկեց որ ամէն խնամք ու զիւրութիւն ըլլուի իրեն և բանի մը կարօտ չըլլայ։ Այսպիսի բարութիւն տեսնելով հակառակորդը զղջաց բոլորովին իր առաջուան ըրածներուն վրայ և անկէ վերջ իրեն ամենասերտ բարեկամներէն մին եղաւ։ Ուրիշ անգամ մ'ալ չարախօսներէ մին զբարառութեանց նամակ մը զբեր և դրկեր էր Խաչատուր Վ. ին որ զանիկայ Հռովմ Ս. Աթոռոյ զրկէ։ Խաչատուր Վ. պժգալով այնքան չարութեան վրայ, բե-

րաւ այդ նամակը ցուցուց Միսիթար արքահօր ըսելով որ չպիտի դրկէ Հռովմ. բայց Աստուծոյ ծառայն յորդորեց զինքը որ հաւատարմութեամբ թող դրկէ, միայն իր կողմանէ ալ տեղ մը զրէ որպէս զի Ս. Աթոռը չկարծէ որ ինքն ալ համամիտ է այն զբարառութեանց։

Եւ այս հեղութիւնը, այս անյիշաչարութիւնը ոչ եթէ իր բահանայութենէն վերջ ու հասուն հասակին մէջ ցուցուց, այլ նոյն իսկ դեռ պատանեկովթեան հասակէն։ Մինչդեռ ինքը Ս. Նշանու վանքին մէջ փոքրիկ պատանի մ'էր և իր ուշիմ հանճարեղութեամբ զիրքեր կը կարդար և անոնցմէ գեղեցիկ իմաստներ կը քաղէր, յաճախ իր կողմանէ ալ գեղեցիկ քարոզներ կը զրէր ապագայ բարողութեանց պատրաստուելով, Ծառուկ անունով արեղայ մը սաստիկ կը նախանձէր վրան։ Երբ օր մը Միսիթար պատանին սենեակին գուրս կը գտնուէր, Ծառուկ մտաւ անոր սենեակը և բոլոր զրուածները ժողվելով դէզ մ'ըրաւ և բոլորն ի միասին այրեց։ Յետոյ անխղճութեամբ մ'ալ պատմեց իրեն ըսելով որ այրեց զանոնք որպէս զի Հոգին Սուրբ անոնցմէ գուրս ելլէ։ Միսիթար սոսկաց այսպիսի հայհոյութեան վրայ, բայց Ծառու-

կին ամենաին գանգատի խօսք մ'անգամ
չըսաւ, այլ միշտ անուշութեամբ ու հե-
զութեամբ կը վարուէր անոր հետ, ինչ-
պէս առաջ:

Այս ամէն առաքինութիւնք միացած
իրեն արտաքին բարեմասնութեանց հետ
սքանչելիք մ'ըրած էին զինքը՝ տեսնող-
ներուն, որոնցմէ շատեր թէ բերնով և
թէ գրով կը կոչէին զինքը՝ պայծառ ջահ
և արեգակն որով այցելեց Աստուած մեր
ազգին:

Ահա այսպիսի անձ մ'էր Միիթար՝ որ
բովանդակ իւր կենաց մէջ սրբութեան
անոյշ բուրում մը սփոելով ամէն կողմ,
մահուրնէ վերջն ալ ուխտատեղի մը ե-
ղաւ իրեն գերեզմանը, ուր մինչև այսօր
այլ և այլ կողմերէ կու գան իրենց հոգ-
ւոց ու մարմնոց հիւանդութեանց և ցա-
ւերու բժշկութիւն և միիթարութիւն զըս-
նելու: Աստուած ալ իր հաւատարիմ ծա-
ռային բարեխօսութեամբ կը կատարէ միշտ
անոնց խնդիրքն, ամենէն աւելի յուսա-
հատական պահուն ալ օգնութեան հաս-
նելով, և հրաշքներով ալ կը փառաւորէ
իր սիրելի ծառայն:

Այս հրաշքներէ մին կատարուեցաւ
վենետիկ ազնուական տունէ տասուեր-
կու տարեկան տղու մը վրայ՝ որ ծանր

հիւանդութեամբ մահուան դուռը հասեր
էր և ամենէն քաջ բժիշկներն ալ յուսա-
հատած էին: Այսպիսի վիրքի մէջ էր երբ
այդ ընտանեաց բարեկամ մէկն այցելու-
թեան երթալով, Միիթարայ պատկեր մը
տուաւ անոնց՝ յանձնելով որ այդ զօրա-
տը սուրբին դիմեն վստահութեամբ: Բա-
րեպաշտ ծնողքն ալ նոյն երեկոյ իրենց
հոգեվարք տղուն բարձին տակ զրին այդ
պատկերը և ջերմենանդութեամբ Միի-
թարայ յանձնեցին իրենց որդին: Ի՞նչ
մեծ ուրախութեամբ լեցուեցաւ սրտելնին
երբ երկրորդ առաւտօ բոլորովին ողջ ա-
ռողջ ելաւ տղան, հիացնելով ամէն տես-
նողներն ու լսողները, մանաւանդ բժիշկ-
ները. և նոյն օրը իր ծնողաց հետ եկաւ
ի վանս չնորհակալութեան աղօթքներն
ընելու մեր երջանիկ հօր գերեզմանին
վրայ:

Նման հրաշք մ'ալ կատարուեցաւ ի-
րեն գերեզմանին վրայ 1847ին: Մատամ
Նէվիլ անգլիացի նորադարձ տիկին մը,
ազնուական և բարեպաշտ, ամենածանր
հիւանդութեամբ մը բռնուած էր Վենետ-
կոյ մէջ. իր ընտանիքը տեսնելով որ
անզօր են այլ ևս ամէն մարդկային հը-
նարք, այլ և այլ տեղեր բարեպաշտներու
և ուխտատեղիներու աղօթք ու ջերմե-

ուանդութիւն յանձնած էին, բայց հիւանալը երթալով կը գէշնար այն աստիճան որ բժիշկը բոլորովին յուսահատած՝ թռողուց և գնաց: Սակայն զրեթէ հոգեվարքի պահուն ներշնչում մ'ունեցաւ, խնդրեց պաղատագին որ վինքը Մխիթար Աքբահօր գերեզմանին վրայ տանին, և եթէ պիտի մեռնի հոն մեռնի . . . հոս կարդանք իր ազգականներէ մէկուն զրած նամակը. Նաթալի Նարիշքին՝ իր թռունիան է որ կը զրէ.

« . . . ի զուր տասնուհինգ օրէ ի վեր վայրկեան մը կը վինտում ցեզի զրելու համար, և սակայն կարեռ լուր մը պիտի հաղորդեմ մեր սիրելի հիւանդի մասին, որուն վիճակը շատ գէշցած էր վերջին նամակէս յետոյ: Քեզ զրելուա՝ որ լաւ է երկրորդ օրը, ընդհակառակն այնպէս ծանրացաւ որ բոլորովին վախի մէջ ձգեց զմեզ. և այն օրէն ի վեր հիւծիչ հիւանդութիւնն այնպէս արագ առաջ զրնաց որ բժիշկը յայտնեց մեզի թէ այլ ևս որ և է դարձան անօգուտ է: Կրնաս գուշակել իր ամէն սիրելեաց սարսափը: Յիրափի, զգալի կերպով կը սպառէր և յայտնի ծիւրումը բոլոր մեր յոյսը կը կարէր: Սակայն մեր վշտացեալ սրտերը հրաշքի մը յոյս ունէին: Նախընթաց եւ

բեկոյ շատ ուշ առեն, կարդացեր էի այսպիսի երեք մեծ հրաշքներ, զոր ըրած էր Աստուած Մարիամ Մարգարիտա Աւլաքոքի միջնորդութեամբ: Ըսի ինքիրենս որ եթէ կենդանի հաւատը մ'ունենայի, իննօրեայ ջերմեռանդութիւն մը կ'ընէի, բայց այլ ևս ժամանակ ձիար, հիւանդութիւնը շատ առաջ զացեր էր: Ոյժը բոլորովին սպառած էր, այնպէս որ ոչինչ սնունդ մ'ալ չէր կրնար ընդունիլ, և վերջապէս՝ ամսոյս 23ին երեկոյեան, բժիշկը յայտնեց որ յուսահատական է դէպքը, և չուզեց այլ ևս իննամել! . . . « 24 ին, առաւօտեան ժամը իննին, ես դեռ սենեակս էի: Կոնտոլայ մը կեցաւ մեր զրան առջև . . . Աթէփանի նէվիլ բոլորովին շնչասպառ, մտաւ յանկարծ սենեակս, և կ'աղաչէր որ շուտով իջնամ վար, ու բովչետև պիտի ցուցնէր ինձ « բան մը » բաւա նա « զոր չէր կրնար վեր բերել »:

Իջայ իրեն հետ, մօտեցայ կոնտոլային: Գուշակէ թէ ինչ տեսայ . . . մամս՝ հրաշքով մ'առողջացած, որ լի յուզմամբ՝ եւ կած էր անձամբ ինձ իմացնելու! Այս հրաշքն ընդունած էր Ա. Միհիթարայ գերեզմանին վրայ Ա. Ղազար վանքին մէջ՝ բեզմանին վրայ Ա. Ղազար վանքին վիճակը: Սանուր իննդրած էր որ տանին վիճակը! Մանրամասնութիւնները պիտի իմանաս երբ գաս ի Վենետիկ . . . »

Այսպիսի հրաշքներ դեռ մինչև այսօր
մեր աջաց առջև հանդիպած են և կը
հանդիպին անդադար բարեպաշտ հաւա-
տացեալներու վրայ, որոնք խմբովին կը
դիմեն Աստուծոյ սիրելի ծառային գերեզ-
մանին վրայ ուխտերնին կատարելու և
Աստուծոյ զթութիւնը ու շնորհըը խրնդ-
րելու իրեն բարեխօսութեամբ. և ամէնքը
կը վերադառնան ուրախ հոգւով և միխ-
թարուած սրտով, թեթևած իրենց ցա-
ւերէն և բժշկուած իրենց հիւանդութիւն-
ներէն;



«Ազգային գրադարան»



NL0163045

